Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Աղքատության հիմնախնդիրը և սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում (Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրի դիտարկման հիման վրա)

Աղասի Թադևոսյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Երևան
2018

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն. Հետազոտության նպատակը, խնդիրները և գլխավոր հարցերը 3
Հետազոտության մեթոդաբանությունը 4
Տեսական նկատառումներ 5
Գլուխ 1. Աղքատության պատկերը և առկա դիսկուրսները..... 8
1.1 Աղքատության նկարագիրը..... 8
1.2 Աղքատության հիմնախնդրի ուսումնասիրվածությունը և աղքատության հաղթահարման քաղաքականությունը ՀՀ-ում 12
1.3 Աղքատության մասին դիսկուրսները..... 15
1.4 Անհավասարության դիսկուրսը և աղքատությունը 19
1.5 Աղքատությունը քողարկելու պրակտիկաները..... 21
Գլուխ 2. Սոցիալական աջակցության պետական քաղաքականության հիմնական առանձնահատկությունները. Դրական ու բացասական կողմերը..... 24
2.1 Սոցիալական աջակցության քաղաքականությունը ՀՀ 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում՝ ՀԶԾ-ում: 24
2.2 Սոցիալական աջակցության քաղաքականության օրենդրական հիմքերի բարեփոխումները..... 25
2.3 Սոցիալական աջակցության ներկայիս իրավիճակը, նպատառուների կարիքների բնութագիրը և հրատապ խնդիրները..... 27
2.4 Սոցիալական և մշակութային կապիտալների ձևավորման ու զարգացման դժվարությունները անապահով ընտանիքներում և դրանց հաղթահարմանն ուղղված հնարավոր լուծումները..... 32
Եզրակացություններ..... 34
Առաջարկություններ..... 38
Օգտագործված գրականություն 40

Ներածություն. Հետազոտության նպատակը, խնդիրները և գլխավոր հարցերը

Հայաստանում անցումային առաջին իսկ տարիներին պաշտոնապես ձևավորվել ու շրջանառվում է անհավասարության դիսկուրսը: Մեծահարուստների խավի ձևավորումը, որպես ՀՀ անկախությանը հաջորդած տարիներին բնորոշ պետականաշինության ռազմավարություն, տարբեր առիթներով կարևորվել է պետական բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից, այն դարձնելով պաշտոնական կամ իշխանական դիսկուրսի գլխավոր պատումներից մեկը: Խնդիրն այն է, որ պաշտոնական դիսկուրսը անցած տարիների ընթացքում տարածվել ու արմատավորվել է նաև հասարակության տարբեր, այդ թվում և աղքատ խավերում, անհավասարությունը հասարակական ընկալումների մեջ դարձնելով ընդունելի ու նորմալ, ինքնին ենթադրելի ու բնական համարվող մի բան, որի դեմ մարդիկ ոչ թե պետք է պայքարեն և ձգտեն փոխել իրավիճակը, այլ՝ որին պետք է հարմարվել ու համակերպված ապրել: Այսինքն, պաշտոնական մակարդակից անհավասարության դիսկուրսը տարիների ընթացքում իջեցվել է առօրյա կյանք և հասարակության մեջ ձևավորել համարժեք առօրյա պրակտիկաներ: Ավելին, անցած տարիների ընթացքում, հարուստների ու նրանց շահերը սպասարկող իշխանությունների կողմից ձևավորվել են աղքատությունը նսեմացնող և հարստությունը գովաբանող դիսկուրսներ, որոնց բնորոշ է «հարուստները խելքով են, իսկ աղքատներն՝ անխելք», «աղքատն իր խելքից է աղքատ», «աղքատությունը ամոթ է», «աղքատն ինքն է մեղավոր իր աղքատության համար» և այլ նմանատիպ պատումներ: Աղքատությունն ու անհավասարությունը դիսկուրսի մակարդակում մեկնաբանվելով որպես ինքին ենթադրելի մի բան և դրա մեղքը գցելով հենց իրենց աղքատների վրա, խոչընդոտում է դրա հանդեպ բողոքի ու դիմադրության այնպիսի պրակտիկաների ձևավորմանը, որոնք կստիպեն քաղաքական վերնախավերին անհանգստանալ ու աղքատության հաղթահարմանն ուղղված քաղաքականություններ մշակել: Այս իրավիճակը տարիների ընթացքում ձևավորել է հասարակական և ընտանեկան մակարդակներում աղքատության վերարտադրության վտանգավոր միտումներ և այդ միտումներին կայուն բնույթ հաղորդող աղքատության մշակույթ:

Այս հետազոտության նախնական հիթոթեզն այն է, որ աղքատության հիմնարար պատճառները քաղաքական բնույթ ունեն: Տնտեսական պատճառները դրանք ածանցված են քաղաքականից: Իսկ քաղաքական պատճառների տակ թաքնված են վերևից ներքև իջեցվող այնպիսի դիսկուրսներ, որոնք նպաստում են աղքատության վերարտադրությունը շարունակական դարձնող պրակտիկաների ձևավորմանը ինչպես հենց իրենց՝ աղքատ խավերի միջավայրում, այնպես էլ աղքատության հիմնախնդրի կարգավորման ոլորտում իրականացված պետական սոցիալական աջակցության ծրագրերի մակարդակում: Ներկայումս, Թավշյա հեղափոխությունից հետո, ստեղծվել է մի իրավիճակ, երբ հարուստների շահերը սպասարկող նախկին իշխանություններին փոխարինել են նոր ուժեր և այս պայմաններում հնարավոր է փոխել սոցիալական աջակցության պետական քաղաքականությունը և հասնել զգալի արդյունքների աղքատության մշակույթի հաղթահարման և մարդկային զարգացման վրա հենված սոցիալական արդարության համակարգի ձևավորման համար:

Այս հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանում աղքատության պատկերը, դրա վերարտադրությանը նպաստող դիկսուրներն ու պրակտիկաները, դրանց արտացոլվածությունը սոցիակական աջակցության ամենից ընդգրկուն՝ ընտանեկան

նպաստների ծրագրում, 2014-2025 թթ. ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում, ինչպես նաև այդ ծրագրերում և սոցիալական աջակցության ՀՀ օրենքում առկա ծրագրային ու օրենսդրական ռեսուրսները և ներկայացնել ոլորտում բարեփոխումներ իրականացնելուն ուղղված առաջարկներ:

Այս հետազոտության նպատակը չէ ներկայացնել աղքատության տնտեսական պատճառները, քանի որ լայն առումով տնտեսական քաղաքականությունը ու գերակայությունները նույնպես դոմինանտ դիսկուրսից ու նարատիվներից բխող հետևանքներ են: Ուստի հետազոտության մեջ աղքատության ու անհավասարության քանակական պատկերին անդրադարձ կկատարվի միայն հիմնական գծերով, որպեսզի այս աշխատանքով առաջ քաշված հետազոտական խնդրի ֆոնը:

Հետազոտության հիմնական հարցերն են.

- Ինչպիսի՞ն են աղքատությունը նկարագրող դոմինանտ դիսկուրսները և ինչպե՞ս են դրանք ազդում աղքատության վերարտադրության վրա:
- Ինչպե՞ս կարելի է մեծացնել հավասարության ու ազատության պատումների ազդեցությունը աղքատության հաղթահարման գործընթացում:
- Որքանո՞վ են դրանք արտացոլված սոցիալական աջակցության քաղաքականությունում և որքանո՞վ է վերջինս իրականում նպաստում է աղքատության հաղթահարմանը:
- Ի՞նչ առանձնահատկություններ ունի «աղքատության մշակույթը» Հայաստանում
- Աղքատությունը և աղքատության մշակույթը ՀՀ-ում հաղթահարելու հեռանկարի տեսանկյունից ի՞նչ ռեսուրս ունեն սոցիալական աջակցության առկա օրենսդրական և ծրագրային փաստաթղթերը:
- Ինչպե՞ս բարելավել սոցիալական աջակցության պրակտիկաները աղքատության հաղթահարման տեսանկյունից:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտությունն իրագործվել է որակական մեթոդներով: Իրականացվել է գրավոր աղբյուրների հետազոտություն, խորացված և փորձագիտական հարցազրույցներ, դահլիճային քննարկումներ:

- *Գրավոր աղբյուրների հետազոտություն*. Հետազոտվել են աղքատության հիմնախնդրին վերաբերող տարբեր տարիներին իրականացված հետազոտությունները, աղքատության հաղթահարման հետ կապված քաղաքականության ծրագրերը, միջազգային տարբեր կառույցների զեկույցներ և խնդրին վերաբերող տեսական գրականություն:
- Թվով 25 *խորացված հարցազրույցներն* իրականացվել են ընտանեկան նպաստների ցուցակներում ընդգրկված ընտանիքների ներկայացուցիչների, ցուցակներում չընդգրկված, բայց աղքատության տարբեր մակարդակներում ու աղքատության ռիսկային խմբերում գտնվող ընտանիքների ներկայացուցիչների հետ: Ընտրանքը ընդրգրկել է նաև բնակչության միջին ապրելակերպ ունեցող ընտանիքների ներկայացուցիչներին՝ աղքատության մասին հասարակության այլ խմբերում տարածված պատկերացումներն ու մոտեցումները գրանցելու նպատակով:

- *Թվով 10 փորձագիտական հարցազրույցներն* իրականացվել են աղքատության հիմնախնդրին քաջատեղյակ հասարակագետների, աղքատների հետ աշխատող սոցիալական աշխատողների, պետական հաստատությունների աշխատակիցների, ՀԿ-ների ներկայացուցիչների հետ: Հնարավորինս տարբեր տեսանկյուններ գրանցելու նպատակով հարցազրույցներ են իրականացվել նաև լիբերալ ու ձախ հայացքներ ունեցող ինտելեկտուալների հետ:
- Հարցազրույցներն իրականացվել են երեք խոշոր քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում:
- Հետազոտության հեղինակը մասնակցել է նաև թվով հինգ դահլիճային քննարկումների՝ նվիրված Ծիրակի, Գեղարքունիքի մարզերում և Երևանում տիրող իրավիճակին: Քննարկումների մասնակիցները եղել են սոցիալական աշխատողներ, միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ:
- Ընտրանքն իրականացվել է կին/տղամարդ սեռերի մեջ համապատասխանաբար 52/48 տոկոսային հարաբերությամբ: Ընտրվել են 18-40, 41-65, 65-ից բարձր տարիքային խմբերի ներկայացուցիչներ 40/40/30 տոկոսային համամասնությամբ:

Տեսական նկատառումներ

Հայաստանում աղքատության հիմնախնդրին նվիրված հետազոտություններում արդեն 2000-ականներին հիայտ է գալիս «աղքատության մշակույթ» եզրի գործածումը (Պետրոսյան 2001, 370-383): Այս եզրը գործածության մեջ է դրվել Օսկար Լյուիսի կողմից դեռևս 1958 թ.: Ըստ այդմ առանձնացվում է աղքատության մշակույթի վերաբերյալ հասկացությունը, ինչը բնորոշվում է, որպես աղքատության մեջ տևականորեն, մի քանի սերունդ ապրելու այն իրավիճակը, երբ աղքատների որոշ խմբերի մոտ ձևավորում է ապրելակերպի մի ձև, որը վեր է ածվում նրանց յուրահատուկ մշակույթի և առաջացնում է այդ մշակույթին պատկանելության զգացում: Ոչ բոլոր աղքատներն են, որ հայտնվում են աղքատության մշակույթի մեջ: Սակայն նրանք ովքեր հայտնվում են դրանում, ձեռք են բերում որոշակի մշակութային հատկանիշներ, որոնք դառնում է այդ խմբերում աղքատության վերարտադրության պատճառ: Նրանք չունեն անհրաժեշտ այն ունակությունները և գիտելիքները, ինչը կարող է թույլ տալ ինքուրույն դուրս գալ այդ իրավիճակից: Միևնույն ժամանակ նրանք ձեռք են բերում աղքատության մեջ ապրելու, դրան հարմարվելու և ծանր իրավիճակում ապրելու հատկանիշներ, որոնք նրանց թույլ են տալիս ապրել ու գոյատևել այդ ծայրահեղ իրավիճակում: Օ. Լյուիսի պնդմամբ աղքատ խմբերում երեխաները չեն ունենում երկարատև ու պաշտպանված մանկություն: Նրանք շատ արագ հայտնվում են ինքնուրույն իրենց գոյատևումը ապահովելու հրամայականի առջև, ավելի վաղ են մտնում սեքսուալ հարաբերությունների մեջ, ընկնում իրենցից փորձառու ավելի տարիքով, ոչ օրինական վարքագիծ ունեցողների ազդեցության տակ: Այս ամենի հետևանքում աղքատության մշակույթը յուրացվում է, տարածվում և փոխանցվում, որպես աղքատ խավերի համար յուրահատուկ վարքագծի ձև: Մեկ այլ բնորոշ երևույթ է այն, որ աղքատության մշակույթում հայտնվողների մոտ ի հայտ են գալիս հատկանիշներ, որոնք տանում են նրանց ինքնամեկուսացմանը հասարակության հիմնական խմբերից: Նրանք սահմանափակում են նաև իրենց մուտքը հասարակական այնպիսի ինստիտուտներ, որոնք մնացած քաղաքացիների համար սովորական առօրյայի մի մասն են կազմում (Lewis 1966, 19-25): Ասենք օրինակ, նրանք դադարում են հաճախել թանգարաններ, համերգներ,

թատրոն, դադարում են օգտվել բանկային ծառայություններից և այլն: Խնդիրը միայն այդ հաստատություններ հաճախելու ֆինանսական մատչելիության մասին չէ: Նրանք չեն հաճախում նաև անվճար մշակութային և հանրային միջոցառումների և միտված են ինքնամեկուսանալու հասարակության այլ խմբերից:

Օ. Լյուիսը պնդում է, որ մի անգամ հաստատվելու դեպքում, աղքատության մշակույթը հակված է պահպանվել ու փոխանցվել սերնդից սերունդ: Աղքատ ու մեկուսի միջավայրերում երեխաները վաղ տարիքում սոցիալիզացվում են իրենց մշակույթին: Դրանից հետո շատ բարդ է լինում դուրս գալ դրանից: Եթե փորձենք միավորել Լյուիսի տեսությունը Պ. Բուրդյոի հաբիտուսի ու պրակտիկաների տեսության հետ (Bourdieu 1984, 169-175), ապա կարելի է ասել, որ կրկնվող պրակտիկաները վաղ տարիքի երեխաների մոտ ձևավորում է նրանց հաբիտուսը, ինչը հետո պայմանավորում ու ուղղորդում է այդ երեխաների վարքագիծը: Նրանք հոգեբանորեն հակված չեն արձագանքելու այն հնարավորություններին, որոնք նրանց առջև բացվում են, ուստի շարունակում են մնալ աղքատության մեջ: Դրա հետևանքում ձևավորվում է այսպես կոչված աղքատության շրջան, որից ամեն հաջորդ սերնդի համար ավելի ու ավելի է դժվարանում ինքնուրույն դուրս գալը:

Այս մոտեցումը միանշանակ չընդունվեց հետազոտողների միջավայրում և արժանացավ քննադատությունների: Քննադատությունների հիմնական փաստարկումները վերաբերում են այն բանին, որ աղքատության մշակույթը մեկնաբանվում է բացասական շեշտադրումներով, ինչը աղքատների հանդեպ ձևավորում է ոչ դրական մոտեցումներ:

Աղքատության մշակույթը քննադատող տեսություններից մեկն էլ սոցիալական զրկանքների տեսության ներկայացուցիչներն էին, ովքեր պնդում էին, որ աղքատության մշակույթ հասկացությունը աղքատությունը նկարագրելով որպես մշակույթ, թույլ չի տալիս փնտրել այն հաղթահարելու ճանապարհները: Այդ պատճառով նրանք աղքատությունը բնութագրում են ոչ թե որպես մշակույթ, այսինքն կայունացած մի իրավիճակ, որում ապրող մարդուն դժվար է դրանից դուրս գալը, այլ՝ աղքատությունը բնութագրում է որպես իրավիճակային երևույթ, որում մարդիկ հայտնվում են ինչ-ինչ իրավիճակների հետևանքում և կարող են դրանից դուրս գալ, հաղթահարելով ստեղծված իրավիճակի հետևանքները: Այս տեսությունը վիճարկում է այն թեզը, որ աղքատության մշակույթում հայտնվելը ձևավորում է աղքատության շրջան, որի մեջ աղքատությունը դառնում է առօրյա և սերնդեսերունդ փոխանցվող երևույթ: Ընդհակառակը, նրանք գտնում են, որ աղքատը կարող է հաղթահարել իր աղքատությունը և երբ նա դուրս է գալիս դրանից, ապա կարող է փոխել իր կյանքը, այլ ոչ թե կախված մնալ իր աղքատության մշակույթից: Նրանք գտնում են նաև, որ աղքատները մեկուսացած չեն հասարակությունից ծայրահեղորեն և նրանց արժեքները չեն հակադրվում հասարակական արժեքներին և մշակույթին: Հակառակը, նրանք կիսում են հասարակության մնացած անդամների հետ համահասարակական արժեքները, դրա համար էլ նրանց հեշտ է դուրս բերել աղքատությունից և դարձնել մասնակից իրենց աղքատության հաղթահարման գործընթացին ներգրավման միջոցով: Այս տեսությունը մոտ է մեկ այլ տեսության, որը հայտնի է *հնարավորությունների տեսություն* անվամբ (Opportunity theory*):* Համաձայն այս տեսության, աղքատները չեն կարողանում ինքնուրույն հաղթահարել վիճակը մարդկային կապիտալի սահմանակության պատճառով: Այս տեսության համաձայն, հասարակական համակարգը այնպես է կառուցված, որ թույլ է տալիս մրցունակ ու հաջողակ լինել միայն որոշակի խմբերի, միևնույն ժամանակ խոչընդոտելով այլ խմբերի, հատկապես աղքատների հաջողության հասնելու հնարավորությունը (Merton 1957): Հնարավորությունների տեսությանը լրացնող կարելի է համարել *կարողությունների աղքատության տեսությունը (*Capability poverty*)*: Այս

տեսությունը հենվում է Ամարտիա Սենի մարդկային զարգացման գաղափարի վրա (Sen 1985) և առաջ քաշում այն միտքը, որ աղքատությունը հաղթահարելու մեջ կարևոր պետք է համարել աղքատների կարողությունների զարգացումը (Saith 2001. Alkire 2007. Laderchi et al., 2003):

Լյուիսը քննադատվում է նաև աղքատության համար հենց իրենց՝ աղքատներին մեղադրելու համար կամ աղքատությունը նույնացնելու սևերի մշակույթի հետ և դիտարկելու աղքատության մշակույթը որպես ոչ մարդավայել մի բան (Valentine 1969, 188): Քննադատների պնդմամբ, աղքատության համար հենց իրենց աղքատներին մեղադրելը շեղում է ուշադրությունը աղքատության իրական պատճառներից: Դրանում մեղադրվում են հատկապես այն քաղաքական գործիչները, ովքեր դատապարտելով աղքատներին և նրանց էլ համարելով մեղավորներ, չեն առաջարկում աղքատությունը հաղթահարելու իրական մոտեցումներ (Gans 1971. Rank 2004): Այս մոտեցումը դատապարտվում է հատկապես *մարդկային կապիտալի տեսության* ներկայացուցիչների կողմից, ովքեր որպես աղքատության հաղթահարման ուղի են համարում աղքատների մարդկային կապիտալի զարգացման ուղղված քաղաքականությունների իրագործումը (Darling 2002. Rank 2004):

Անդրադառնալով Օսկար Լյուիսի հասցեին արված քննադատություններին ամերիկացի սոցիոլոգ Դեյվիդ Հարվին գտնում է, որ այդ քնադատությունները երբեմն չափազանցված են եղել իրենց հնչեցրած մեղադրանքների մեջ: Նա նշում է, որ Լյուիսը ոչ թե արդարացնում, այլ հակառակը՝ իր մոտեցումներում քննադատական է վերաբերում կառավարություններին, ում պատճառով որ ձևավորվել է աղքատության մշակույթը: Ավելին, նա ցույց է տալիս, որ աղքատության մշակույթն իր մեջ ունի աղքատ վիճակից մարդկանց դուրս բերելու ներուժ և այն կարող է դրական դեր ունենալ աղքատության հաղթահարման գործում, եթե կառավարությունները դրան նպաստող քաղաքականություն վարեն (Harvey 1996, 466-467): Այս առումով կարևոր է ուշադրություն դարձնել *սոցիալական մեկուսացման աղքատություն* (Social Exclusion Poverty) անվանումը ստացած տեսության վրա: Դրա կողմնակիցները գտնում են, որ աղքատության խորացնող և դրա հաղթահարմանը խոչընդոտող հանգամանք է աղքատների սոցիալական մեկուսացումը հասարակությունից: Մեկուսացումը բացասաբար է ազդում իրականության ընկալումների և աղքատությունը հաղթահարելուն ուղղված համարժեք քայլեր ձեռնարկելու վրա և բացասաբար ազդում հնարավորությունների հավասարության տեսանկյունից (Silver and Miller 2002. Bessis 1995):

Ներկայացվող վերլուծությունում, որպես մեթոդաբանական մոտեցում հիմք է ընդունվում Օ.Լյուիսի աղքատության մշակույթ ձևակերպումը, հաշվի առնելով նաև դրան ուղղված վերը նշված քննադատական նկատառումները ու առաջարկված նոր մոտեցումները: *Աղքատության մշակույթ* ասելով նկատի է առնվում աղքատ ու սոցիալապես անապահով խմբերում տարածված պրակտիկաների ու կարծրատիպերի այն դրսևորումները, որոնք փոխանցվելով սերնդից սերունդ նպաստում են անձի ու ընտանիքի մակարդակում աղքատության վերարտադրությանը: Այդ պրակտիկաներն ու կարծրատիպերը հաճախ աղքատ մարդկանց չի հաջողվում հաղթահարել սեփական ուժերով, անհրաժեշտ ունակությունների անբավարարության, սոցիալական մեկուսացվածության և անհավասար մեկնարկային հնարավորությունների և այլ պատճառներով: Ուստի, պետք է եզրակացնել, որ *սոցիալական աջակցության քաղաքականության խնդիրներից մեկը կարող է համարվել, ոչ միայն աղքատ ընտանիքների գոյատևմանը աջակցելը կամ լավագույն դեպքում նյութական աղքատության մեղմումը, այլ՝ աղքատության մշակույթի հաղթահարմանը նպաստելը և կարողությունների ու հնարավորությունների զարգացման միջոցով դրանից դուրս գալը*:

Այս հետազոտության խնդիրներից է բնութագրել Հայաստանում ձևավորված աղքատության երևույթը աղքատության մշակույթ ձևավորող պրակտիկաների ու դիսկուրսների տեսանկյունից և մշակել առաջարկներ, որոնք կօգնեն սոցիալական քաղաքականության թիրախային խնդիրներից մեկը դարձնել աղքատության մշակույթի հաղթահարմանը նպաստելը:

Գլուխ 1. Աղքատության պատկերը և առկա դիսկուրսները

1.1 Աղքատության նկարագիրը

Որպես համահայաստանյան առանցքային պրոբլեմի, աղքատության մասին սկսվեց խոսվել 1990-ականների երկրորդ կեսերին: Աղքատությունը Հայաստանին բնորոշ է եղել նաև Խորհրդային Միության ժամանակաշրջանում: ԽՍՀՄ վերջին շրջանում Հայաստանում այն կազմել է 18-20% (ԱՀՌԾ 2003, 24: Խառատյան 2000, 29. Գաբրիելյան 2001, 11): Այս ցուցանիշը զգալիորեն գերազանցել է աղքատության համամիութենական միջին տվյալը՝ 12%-ը (ԱՀՌԾ 2003, 24), ինչի պատճառով Հայաստանը միջինասիական չորս հանրապետությունների հետ միասին համարվել է ԽՍՀՄ աղքատ հանրապետություններից մեկը: Աղքատության ծավալների աճի վրա ծանր անդրադարձավ նաև 1988 թ. երկրաշարժը, ինչի հետևանքում շուրջ 400,000 մարդ հայտնվեց աղետյալի կարգավիճակում: Դրան գումարվեց նաև հայ-ադրբեջանական հակամարտության հետևանքում Հայաստան բռնազաղթած փախստականները: Անկախության առաջին իսկ տարին ուղեկցվեց Ադրբեջանի հետ պատերազմով: Պատերազմի հետևանքում տեղահանվեց և այլ բնակավարեր տեղափոխվեց սահմանամերձ տարածքների բնակչության մի զգալի հատվածը՝ շուրջ 70,000 մարդ (ԱՀՌԾ 2003, 25): Պատերազմի հետևանքում Հայաստանը ենթարկվեց շրջափակման Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից: Խորհրդային գործարանների անգործությունը, տնտեսության փաստացի փլուզումը, էներգետիկ և տնտեսական խորը ճգնաժամը առաջացրեցին գործազրկության համատարած վիճակ (Mckinley 2002,, 51-53): 1991- 1995 թվականները Հայաստանի համար ամենից ճգնաժամային տարիներն էին: Այդ տարիներին բնակչության մեջ աղքատության գծից ցածր եկամուտ ունեցողների թիվը կազմել է շուրջ 70-80 % (Falkingham 2005, 346. Գալստյան 2000, 12): Փաստացիորեն բնակչության հիմնական մասը հազիվ լուծում էր գոյատևման խնդիրը (Dudwick, 2002, 125-127, Khan 2007, 14. Gomart 2002, 158-160): Այս տարիներին տեղի ունեցավ նաև արտագաղթի ամենամեծ արտահոսքը: Շուրջ 600,000 մարդ հեռացավ Հայաստանից: Վիճակը սկսեց մի փոքր կայունանալ 1996 թվականից հետո: Այդ տարիներից սկսած հաջորդ տաս տարվա ընթացքում տեղի է ունենում աղքատութան նվազում (Հայաստանի սոցիալական պատկերը 2002, 105-106): Տաս տարվա մեջ աղքատությունը 56.1%- ից կրճատվում է մինչև 26.5%-ի: Կարևոր է հատկապես ծայրահեղ աղքատ բնակչության թվի կրճատումը 21% -ից 4.1%-ի (ԿԶԾ 2008, 42-43): Սակայն, աղքատության հաղթահարման քաղաքականությունը այս տարիներին ուներ լրջազույն մի թերություն՝ շատ մեծ նշանակություն էր տրվում սոցիալական նպաստների միջոցով աղքատության կրճատմանը: Դա էր պատճառը, որ 2008 թվականին սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հաշված ամիսների ընթացքում հանգեցրեց աղքատների թվի կտրուկ աճի: Ընդամենը մեկ տարում գրանցվեց աղքատների թվի 6.5 % աճ: 2010 թվին աղքատության ծավալներն աճում են մինչև 35.8%: Տնտեսական աճի անկումը հանգեցրեց աղքատության կրճատման երկարատև ծրագերի սառեցմանը և

քաղաքականության սահմանափակմանը ծայրահեղ խոցելի ընտանիքներին աջակցության ցուցաբերմամբ, գլխավոր նպատակ ունենալով այդ խմբերում աղետալի իրավիճակների կանխումը (Թադևոսյան 2012, 34-36): Ճգնաժամային իրավիճակը տևում է մինչև 2011 թվականը: Այդ տարի հնարավոր եղավ կանգնեցնել աղքատության աճը և գրանցել նվազեցման որոշ ոչ մեծ միտումներ: Չնայած աղքատության նվազեցման այդ միտումներին, 2015 թ. աղքատության ծավալները դեռևս շարունակում էր գերազանցել 2008 թվականի մակարդակը, կազմելով 29.8%: Եվ միայն 2017 թ. հնարավոր եղավ աղքատության ցուցանիշը նվազեցնել մինչև 25.0%-ի (Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, 110) և մոտեցնել այն 2008 թվականի մակարդակին:

Չնայած աղքատութան ցուցանիշում որոշ նվազեցման միտումներին, մտահոգիչ է մնում մեկ այլ երևույթ: Դա աղքատության գնահատման ոչ իրատեսական ցուցանիշներն են: Ըստ այդմ աղքատ են համարվում աղքատության վերին ընդհանուր գծից՝ 41,612 ՀՀ դրամից, մեկ շնչի հաշվով ցածր սպառում ունեցող քաղաքացիները: Իսկ ծայրահեղ աղքատները աղքատության պարենային գծից՝ 24,269 ՀՀ դրամից ցածր սպառում ունեցողները (Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, 110):

Ակնհայտ է, որ նշված դրամական շեմերը խիստ անիրատեսական են և իրականում դրանք պետք է ավելի բարձր լինեն, ինչի հետևանքում աղքատության իրական ցուցանիշը կլիներ մոտ 60-70% (Հայաստանում աղքատության ցուցանիշի սուտը 2016):

Վերը նշված ցուցանիշները վերաբերում են բացարձակ աղքատության չափմանը կամ ավելի պարզ ասած նյութական առաջնային կարիքների անկարողությանը (Աղքատության պատկերը, 2016): Սակայն ներկայումս համաշխարհային պրակտիկայում գործում է աղքատության չափման ավելի կատարելագործված ցուցանիշների համակարգ, ըստ որի աղքատությունը նյութական պահանջմունքներից բացի, վերաբերում է նաև մարդկային զարգացման համար կարևոր կարիքների բավարարման անկարողությանը: Այդ նպատակով, շրջանառության մեջ է դրվել աղքատության բազմակողմանիությունը բնութագրող *բազմաչափ աղքատություն* հասկացությունը (HDP 2010, 94-99): Բազմաչափ աղքատությունը ցուցանիշների համակարգում ընդգրկել են կրթության, առողջապահության և կյանքի պայմանների հետ կապված զրկանքները գնահատող ինդիկատորներ: Սրա կարևորությունը այն է, որ աղքատության հաղթահարման քաղաքականության մեջ շեշտադրումը նյութական աջակցության ցուցաբերումից տեղափոխում է աղքատների մարդկային զարգացման խնդրի վրա (Alkire and Foster 2011, 478): Բազմաչափ աղքատության հասկացությունը կարևորում է աղքատների ոչ միայն նյութական նվազագույն կարիքների բավարարումը, այլև՝ *զրկանքների հաղթահարումն ու արժանավայել կյանքի ապահովումը* մարդկային զարգացման համար անհրաժեշտ կարիքների բավարարման տեսանկյունից:

Աղյուսակ 1 (HDR 2016, 220-221)

Բազմաչափ աղքատությունը 2015 (%)	Զրկանքների խորությունը (%)	Բազմաչափ աղքատությունը գյուղում (%)	Բազմաչափ աղքատությունը Երևանում (%)	Զրկանքների չափը ընդհանուր աղքատության մեջ կրթություն/ առողջապահություն (%)
29.1	37.0	32.7	28.0	3.4 / 87.8

Ներկայացված աղյուսակը թույլ է տալիս ասել, որ Հայաստանում բազմաչափ աղքատության ձևավորման վրա ազդող կարևոր ցուցանիշներ են համարվում առողջապահության և կրթության բաղադրիչները: Հատկապես, առողջապահության հետ կապված զրկանքները շատ մեծ դեր ունեն բազմաչափ աղքատության ձևավորման ու ընդհանուր աղքատության մեջ զրկանքների չափը պայմանավորելու հարցում: Ընդհանուր աղքատության մեջ առողջապահության ոլորտում առկա զրկանքների ծավալը կազմում է 87.8%: Այսինքն, կարելի է ասել, որ աղքատ բնակչության համար առողջապահությունը հիմնարար զրկանքներից մեկն է: Որակական հարցումները նույնպես փաստում են, որ առողջապահության հետ կապված զրկանքները ոչ միայն աղքատության բնութագրական երևույթներից է, այլև՝ աղքատությունը վերարտադրող և նույնիսկ աղքատության մշակույթը խորացնող պատճառ:

Չնայած տոկոսային առումով կրթության հետ կապված զրկանքները առողջապահության համեմատ զգալիորեն ցածր են, սակայն իրականում այն նույնպես ընտանիքում աղքատության վերարտադրության վրա ազդող շատ էական գործոն է: Խնդիրն այստեղ այն է, որ մարդիկ հաճախ որակյալ կրթության անմատչելիությունը չեն ընկալում որպես զրկանք: Սակայն, իրականում ոչ որակյալ կրթությունը, կրթական անորակ հաստատություններում մշակութային կապիտալի զարգացման հնարավորությունների ծայրահեղ սահմանափակությունը, աղքատ ընտանիքների երեխաների միջավայրում ծնողներից աղքատությունը ժառանգելու հիմնական պատճառներից մեկն է:

Այստեղ զրկանքներին ավելանում է նաև անհավասարության հիմնահարցը: Թե որակական հետազոտությունը և թե գրավոր աղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ բնակչության աղքատ ու ոչ աղքատ խավերի մեջ առկա է խոր անհավասարություն: Դրա մասին է խոսում նաև ՄԱԿ-ի կողմից ընդունված մարդկային զարգացման ցուցիչներից մեկը՝ անհավասարության համաթիվը (Inequality index): Հայաստանին վերաբերող ցուցանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ աղքատության համաթվի կառուցվածքում նորից զգալի դեր ունեն առողջապահության ոլորտի հետ կապված խնդիրները:

Դա արտացոլված է հատկապես մարդկային զարգացման համաթվում ներառված այնպիսի ցուցիչում, ինչպիսին է ծնվելու պահին կյանքի ակնկալվելիք տևողությունը: Ստորև ներկայացվող *աղյուսակ 2*-ը թույլ է տալիս տեսնել, որ անհավասարության ձևավորման վրա էական է եկամուտների բևեռացվածությունը և ծնվելու պահին կյանքի ակնկալվող միջին տևողության տարբերությունը: Ըստ այդմ, կյանքի ակնկալվող տարբերությունը աղքատ ու բարվոք ընտանիքների միջև կազմում է 10.1% կամ 7.5 տարի: Անհավասարությունը արտահայտվում է նաև այն բանում, որ աղքատների ոչ միայն կյանքի տևողությունն է ավելի կարճ, այլև՝ առողջապահական տեսանկյունից շատ ցածր է կյանքի որակը: Աղքատ ընտանիքների անդամները անորակ սնունդի, հիգիենայի նվազագույն պայմանների անբավարարության, ժամանակին բժշկի դիմելու համար անհրաժեշտ գումարի պակասի և այլ պատճառներով հաճախ են հիվանդանում և ուշ ուշ են դիմում բժշկի, ինչի հետևանքով տառապում են կյանքի որակի վրա բացասաբար ազդող տարբեր

հիվանդություններով: Սա ավելի է խորացնում առողջապահական զրկանքներով պայմանավորված անհավասարությունը:

Աղյուսակ 2 (HDR 2016, 209)

Անհավասարության ինդիկատորները		
Անհավասարությունը ըստ կյանքի տևողության (%)	Անհավասարությունը կրթության մեջ (%)	Անհավասարությունը ըստ եկամտի (%)
10.1	3.7	13.9

Կրթության ոլորտում նույնպես նկատելի է որոշակի հիմնախնդիրներ (աղյուսակ 3): 2015 թվականին տարրական դպրոցներից դուրս մնացած երեխաների թիվը կազմել է 9.8%, ինչը խոսում է կրթության մատչելիության տեսանկյունից այդ երեխաներին զրկանքների ենթարկվելու մասին: Զրկվածությունը ակնհայտ է նաև որակյալ կրթություն ստանալու հարցում: Այն, որ ուսուցիչների 23%-ը չունի անհրաժեշտ կրթություն և նրանք հիմնականում դասավանդում են աղքատ բնակչությամբ աչքի ընկնող հեռավոր ու սահմանային գյուղերի երեխաներին, վկայում է անհավասարության և որակյալ կրթությունից զրկվածության մասին:

Աղյուսակ 3 (HDR 2016, 233)



Կրթության ոլորտում մարզային և ունեցվածքային տեսանկյուններից անհավասարության առկայությունը առավել ծանր է ազդում հատկապես նպաստառու և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների զարգացման և ապագայի վրա: Ինչպես և բոլոր մարզերում ապրող երեխաները նրանք զրկված են որակյալ կրթություն ստանալու հնարավորությունից: Սակայն, դրան զուգահեռ նրանք զրկված են նաև դպրոցից դուրս երեխայի զարգացման համար կարևոր մշակութային և սպորտային խմբակներ հաճախելու հնարավորությունից: Նրանք զրկված են նաև երեխայի ընդհանուր զարգացման համար նշանակություն ունեցող գրքերից և խաղալիքներից, տարբեր տեսակի մշակութային ու

ժամանցային միջավայրեր հաճախելու հնարավորությունից: Ընդհանուր առմամբ այս անհավասար վիճակին է գումարվում նաև ծնողների մշակութային ու կրթական զարգացվածության ցածր մակարդակը և կյանքի պայմանների ու միջավայրի գորշությունը, ինչը էականորեն սահմանափակում է այդ երեխաների զարգացման հնարավորությունները:

1.2 Աղքատության հիմնախնդրի ուսումնասիրվածությունը և աղքատության հաղթահարման քաղաքականությունը ՀՀ-ում

Անցումային շրջանի տնտեսական քաղաքականությունը, որը ծրագրավորված էր ողջ հետխորհրդային երկրների համար, իբրև սոցիալիստական պլանային տնտեսությունից անցում ազատ շուկայական տնտեսության, ինչպես և շատ այլ հետխորհրդային երկրներում ունեցավ շատ խորը և բացասական սոցիալական հետևանքներ: Այս երևույթը կանխատեսվում էր դեռևս անկախության նախօրեին (Մանուկյան 2002): Այս գործընթացը, որը ստացել էր «շոկային թերապիա» անվանումը, խիստ բացասական հետևանքներ ունեցավ Հայաստանի համար և դարձավ ինչպես ազատ շուկայի և մրցակցության միջավայրի ձևավորման, այնպես էլ քաղաքական համակարգի ժողովրդավարացման ձախողման պատճառ: Ինչպես ժողովուրդը դիպուկ հետագայում բնութագրեց այդ տարիներին իրականացված այդ ձախողված գործընթացը՝ «թերապիան անցավ, իսկ շոկը մնաց»: Գործընթացը, որը լայն գրականության մեջ ստացավ *«երկակի անցում»* (dual transition) անվանումը (Picles J., and Smith A. 1998), հետագայում քննադատվեց ոլորտի շատ մասնագետների կողմից իր անհեռատեսության և անլիարժեքության համար (Bonnell V. 1996; Burawoy M., and Verdery K. 1999; Wolfe T. 2000; Hann C.M. 2002.; Humprey C. 2002, etc.): Եվ չնայած «երկակի անցման» տեսությունը փորձ արվեց որոշակի փոփոխությունների ենթարկել և ի հայտ եկան *«եռակի կամ քառակի անցման»* գաղափարները (triple and quadruple transition) (Offe1991. Kuzio 2001), սակայն դրանցում նույնպես անցման սոցիալական հետևաքների լուծմանն ուղղված առաջարկները գոհացուցիչ չէին: Ընդամենը երկու-երեք տարում համեմատաբար բարեկեցիկ և հավասար հասարակությունը ենթարկվեց կտրուկ աղքատացման ու սոցիալական ծայրաստիճան բևեռացման: Փոփոխություններն այնքան ակնհայտ էին, որ միանգամից գրավեցին հետազոտողների ուշադրությունը: Արդեն 1994-1995 թվականներին սկսվեցին աղքատության և գոյատևման հետազոտությունները, որոնցում հիմնական հետազոտական հարցերը վերաբերում էին աղքատության առաջացման պատճառներին, աղքատության մեջ հայտնված մարդկանց գոյատևման ռազմավարություններին, մարդկանց կողմից միմիանց ցուցաբերվող փախօգնության ձևերին, հասարակական շերտավորման գործընթացներին, աղքատություն ծնող համակարգային խնդիրներին և սոցիալական ոլորտում վարվող քաղաքականությունների թերություններին (Dudwick 2002, Gomart 2002, Թադևոսյան 1999, Թադևոսյան 2001): Սա կարելի է համարել աղքատության հիմնախնդրին նվիրված հետազոտությոնների առաջին փուլը:

Աղքատության հիմնախնդրի հետազոտությունների երկրորդ փուլը սկսվեց Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի – ԱՀՌԾ-ի մշակմանը զուգահեռ: Նախ, սա այն եզակի ծրագրերից էր, որն արդեն մշակման փուլից ստացավ լայն մասնակցային բնույթ: Ծրագրի մշակման նպատակով ձևավորվեց տարբեր մասնագիտական ոլորտներ ներկայացնող 41 փորձագետներից կազմված խումբ, ովքեր

իրականացնում էին աղքատության հաղթահարման ոլորտային քաղաքականությունների մշակումը: Արդյունքում, ԱՀՌԾ-ում որոշակիացվեց աղքատության սահմանումը, բնորոշվեցին աղքատության տարբեր աստիճանները՝ տարանջատելով պարզապես աղքատների, շատ աղքատների և ծայրահեղ աղքատների խմբերը: Ձևակերպվեցին նաև դրանց տիպաբանման չափանիշները, սահմանվեց սպառողական և պարենային զամբյուղների նվազագույն շեմերը և այլն (ԱՀՌԾ 2003. 21-24):

ԱՀՌԾ մշակմանը զուգահեռ աշխուժացավ նաև աղքատությանը նվիրված անկախ հետազոտությունները: Գրվեցին մի շարք աշխատանքներ նվիրված աղքատության տարբեր տեսանկյունների վերլուծությանը: Դրանք վերաբերում էին աղքատության համակարգային պատճառներին (Թադևոսյան 2001, Թադևոսյան 2003), աշխատաշուկայի ու զբաղվածության խնդիրներին, տարածքային և տեղական ինքնակառավարման (Օրդյան և Մանուկյան 2001), գյուղական աղքատության առանձնահատկություններին (Գաբրիելյան 2001), աղքատության ու մարդու իրավունքների փոխկապվածության հիմնահարցերին (Մարգարյան 2001): Իրականացվեցին նաև շատ ծավալուն մարդաբանական հետազոտություններ, որոնցում դիտարկվում էր աղքատության վերարտադրողականության, աղքատության մշակույթին, աղքատության հաղթահարման ժողովրդական ռազմավարություններին նվիրված խնդիրրներ (Խառատյան 2001: Խառատյան և Մարության 2007):

ԱՀՌԾ-ն մինչև օրս կառավարության կողմից մշակված, թերևս, միակ ծրագիրն է, որը ունեցել է լայն մասնակցային գործընթաց: Դրա արդյունքում ԱՀՌԾ-ն մշակող խմբին քաղհասարակության կողմից ներկայացվեց մոտ 700 առաջարկ, որոնց շուրջ 40%-ը ընդգրվեց ծրագրում: Չնայած, նման լայնածավալ մասնակցային գործընթացին և ծրագրի մշակմամբ զբաղվող բազմագիտակարգային փորձագիտական խմբին, ԱՀՌԾ-ն մշակվեց հիմնականում տնտեսական աճի գաղափարախոսության հիմքի վրա, ինչը աղքատության ձևակերպումը հարմարեցրեց *բացարձակ աղքատության* եզրույթի համատեքստին, համաձայն որի այն դիտվում էր որպես նվազագույն նյութական կարիքների բավարարման անկարողություն: Սա հանգեցրեց այն բանին, որ աղքատության հաղթահարման քաղաքականության նպատակը դարձավ ոչ թե աղքատություն ծնող պատճառների հաղթահարումը, այլ՝ բացարձակ աղքատության կրճատումը: Որպես դրա հետևանք, բացարձակ աղքատության կրճատման ռազմավարության հիմքում դրվեց սոցիալական աջակցութան նպաստների քաղաքականության որդեգրումը, դրա հասցեականության բարձրացումը, այդ ոլորտում առկա թերությունների հաղթահարումն ու կատարելագործումը (ԱՀՌԾ 2003. 47-49):

Տնտեսական աճի գաղափարախոսության վրա կառուցված այս մոտեցումը ենթարկվեց քննադատության: Խնդիրն այն է, որ տնտեսական զարգացման հայեցակարգը, չնայած, կարևորում էր մարդկային կապիտալի զարգացումը, սակայն դիտում էր մարդուն որպես տնտեսական աճի ապահովման գործիք: Տնտեսական և մարդկային զարգացման հայեցակարգերի տարբերությունն այն է, որ եթե առաջինը զարգացման նպատակը համարում է տնտեսական աճի ցուցանիշները և դրան ածանցում մարդուն և մարդկային կապիտալի զարգացումը, ապա երկրորդի դեպքում տնտեսական աճը չի համարվում ինքնին նպատակ, այլ՝ դիտվում է որպես մարդկային զարգացման նպատակին ծառայող միջոց: Զարգացման այս հայեցակարգում առանցքային կարևորություն է տրվում մարդու

երկար և որակյալ կյանքին, կրթության տևողությունը և որակին, հնարավորությունների անհավասարության վերացմանը, գենդերային հավասարությանը և բազմաչափ աղքատության հաղթահարմանը:

Քննադատության ենթարկվեց նաև աղքատության կրճատման ռազմավարությունում սոցիալական նպաստներին առանցքային տեղ տալու քաղաքականությունը, քանի որ դա կարող էր աղքատության կրճատման միայն խաբուսիկ էֆֆեկտ ստեղծվել: Այդ եղանակով ծայրահեղ աղքատ ընտանիքներին հաջողվում էր ընդամենը որոշ չափով բարելավել իրենց ծայրաստիճան անմխիթար վիճակը: Սակայն, նախ, նրանք մեծ կախվածության մեջ էին հայտնվում այդ նպաստներից: Երկրորդ, շարունակում էին ապրել տարբեր զրկանքների պայմաններում: Մասնավորապես, չէին կարողանում բավարարել մարդկային զարգացման համար անհրաժեշտ առողջապահական ու կրթական կարիքները այն որակով ու չափով, ինչը թույլ կտար նրանց մոտ աճողական զարգացման և աղքատությունը ինքնուրույն հաղթահարելու միտումներ ձևավորել (Թադևոսյան և Գաբրիելյան 2003, 115): Երրորդ, նշվածի հետևանքում, նրանց մոտ աղքատությունը դառնում էր սերնդից սերունդ փոխանցվող և ընտանիքի մակարդակում վերարտադրվող երևույթ: Չորրորդ, աստիճանաբար ձևավորվում և արմատավորվում էր աղքատության մշակույթին բնորոշ երևույթներ:

Ժամանակը ցույց տվեց այդ քննադատության հիմնավորվածությունը: 2004 թվականից ԱՀՌԾ-ն մշակման փուլից մտավ իրագործման փուլ: Առաջին երեք տարում աղքատությունը հնարավոր եղավ ցուցանիշների մակարդակում կրճատել 13.6%-ով, նվազեցնելով այն 40.1%-ից մինչև 26.4%-ի: Սակայն, 2008-2009 թթ. այս քաղաքականությունը ցույց տվեց, թե որքան խոցելի է այն, երբ վրա հասած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքում աղքատության ծավալները նորից շեշտակիրոեն աճեցին՝ հասնելով 34.1%-ի (Աղքատության պատկերը 2016, 41):

Անկումն այն աստիճան մեծ էր, որ այդպես էլ չհաջողվեց գործարկել ԱՀՌԾ-2 անվանումը ստացած Կայուն զարգացման ծրագիրը, ինչը այդպես էլ մինչև վերջ մնաց ընդամենը թղթի վրա գրված ծրագիր (ԿԶԾ 2008): Դրանից հետո, երկար ժամանակ աղքատության հիմնախնդիրը մոռացության մատնվեց և կառավարությունը դրա նվազեցմանն ուղղված որևէ նշանակալի քայլեր չէր իրականացնում: Պատահական չէ, որ աղքատության ցուցանիշները, մինչև 2014 թվականը տատանվել են 35.8%-ից 32%-ի սահմանները: Եվ միայն 2015 թվականին, երբ աղքատության ցուցանիշները հանրայնացվեցին լրագրողների կողմից, ՀՀ վիճակագրական վարչությունը հաջորդ տարիներին սկսեց ցուցադրել աղքատության դանդաղ նվազող միտում:

Կառավարությունում ծրագրային մակարդակով դրան նորից անդրադարձ կատարվեց ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում՝ ՀԶԾ-ում: Ճիշտ է այն չի հռչակվում, որպես այդ ծրագրի հիմնական նպատակներից մեկը, սակայն ամեն դեպքում, երկար ընդմիջումից հետո, նորից բարձրացվում է, որպես կառավարության կողմից կարևորվող հիմնախնդիր (ՀԶԾ 2014, 106):

Արդեն 2011 թվականին վերլուծաբանների կողմից ներկայացվեցին առաջարկներ, որոնք աննպատակահարմար էին համարում սոցիալական նպաստների միջոցով

աղքատության կրճատման քաղաքականությունը և կարևորում էին ներառական սոցիալական աջակցության ծրագրերի անհրաժեշտությունը (Սոցիալական պաշտպանությունը Հայաստանում 2011, 3):

Նկատենք, նաև, որ աղքատության չափման ներկայիս ցուցանիշների մակարդակում, աղքատությունը հաղթահարելը առանձնապես մեծ ֆինանսական խնդիր չէ: Աղքատությունը լիովին հաղթահարելու համար Հայաստանին անհրաժեշտ է 71.4 միլիարդ ՀՀ դրամ (149 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք), իսկ ծայրահեղ աղքատության վերացման համար ընդամենը 1.8 միլիարդ ՀՀ դրամ (մոտ 4 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք) (Աղքատությունը Հայաստանում 2016, 47): Ինչպես տեսնում ենք, սրանք անհասանելի թվեր չեն: Այլ խնդիր է, որ նախորդ կառավարությունները դրան կարևորություն չեն տվել:

1.3 Աղքատության մասին դիսկուրսները

Որակական հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ աղքատությունը անցած տարիների ընթացքում ձևավորել է դրա մասին որոշակի կարծրատիպային մոտեցումներ և ընկալումներ: Այդ ամենը շարունակաբար շրջանառվում և վերարտադրվում է աղքատության շուրջ առկա տիրապետող դիսկուրսում: Ինչպես այս հետազոտության, այնպես էլ անցած տարի իրականացրած իմ մեկ այլ հետազոտության տվյալների համաձայն աղքատության դիսկուրսը հենվում է մի շարք առանցքային պատումների (նարատիվների) վրա: Այս տեսանկյունից հետազոտության համար կարևոր էր.

- այդ պատումների բովանդակային առանձնահատկությունների հստակեցումը,
- դրանց տարածվածության սոցիալական միջավայրերի որոշակիացումը,
- հանրային կարծիքում դրանք տարածող և շրջանառությունն իրականացնող հիմնական դերակատարների վեր հանումը,
- քաղաքականությունների վրա դրանց ազդեցությանը վերաբերող խնդիրների պարզաբանումը:

Հետազոտության տվյալները թույլ են տալիս ասել, որ աղքատության դիսկուրսին բնորոշ հիմնական պատումները հետևյալներն են.

- Աղքատությունը ամոթ է,
- Աղքատությունը դատապարտելի է, իսկ հարուստ լինելը՝ գովելի ու ընդօրինակելի,
- Քանի որ հարուստ լինելը ընդօրինակելի է, ընդօրինակելի են նաև հարստանալու ճանապարհները: Իդեպ, ընդօրինակելի են հարստանալու բոլոր, ընդհուպ մինչև գողանալու և կոռուպցիայի դիմելու ուղիները,
- Աղքատը աղքատ է իր խելքից: Աղքատն անխելք է, հարուստը խելքով:
- Աղքատն աղքատ է իր մեղքով:
- Աղքատության պատճառը աղքատների ալարկոտությունն է:
- Աղքատները սովոր են աղքատ ապրելուն և չեն ցանկանում այդ վիճակից դուրս գալ:

Աղքատության և ամոթի զգացողության միջև կապը լայնորեն քննարկվող խնդիր է աղքատությանը վերաբերող արդի վերլուծություններում (Chase and Bantebya-Kyomuhendo 2015. Walker and Chase 2014. Walker and Chase 2015): Դա բնորոշ է ոչ միայն հայկական

միջավայրին, այլ՝ բավականին տարածված երևույթ է: Նույնիսկ զարգացած արևմտյան հասարակություններում ամոթը հաճախ խոչընդոտում է աղքատությունը հաղթահարելու գործին: Ամոթը ստիպում է մարդկանց թաքցնել իրենց աղքատությունը, իսկ դա իր հերթին խոչընդոտում է աղքատության հաղթահարմանն ուղղված վճռական քայլերի ձառնարկմանը:

Հայաստանյան միջավայրում աղքատ լինելը ամոթ համարելու և աղքատների հանդեպ խտրական վերաբերմունքի արմատները որոշ առումով գալիս են դեռևս Խորհրդային ժամանակներից, որտեղ չնայած պաշտոնական գաղափարախոսության դիրքից աղքատությունը չէր դիտվում որպես ամոթ, սակայն առօրյա իրավիճակներում աղքատությունը դիտվում էր ամոթ և ստորացուցիչ մի բան: Աղքատների հանդեպ կար նաև խտրական վերաբերմունք, ինչի պատճառով մարդիկ թաքցնում էին իրենց աղքատ վիճակը: Բացի դա Խորհրդային ժամանակաշրջանում չնայած հասարակության մի զգալի մասը ապրում էր կարիքի ու աղքատության մեջ, սակայն տարածված կարծիքի համաձայն մեծամասնության այդ վիճակը աղքատություն չէր համարվում և բնորոշվում էր որպես «նորմալ» կամ «միջին»: Իսկ աղքատ համարվում էին չքավորության մեջ ապրողները, ովքեր չէին կարողանում ապահովել ընտանիքի անդամների նյութական նվազագույն պահանջներն ու որակյալ սնունդ: Աղքատությունը նկատելի է դառնում հատկապես հանրայնորեն ներկայանալի հագուստի և բնակարանի կահավորանքի պարագայում: Սակայն, ըստ բանասացների, Խորհրդային շրջանում սոցիալիզմի որոշ դրսևորումներ թույլ չէին տալիս մարդկանց իրենց զրկված ու աղքատ զգալ: Ցածր, սակայն կայուն ամսական աշխատավարձերը, առողջապահության, կրթության համատարած անվճար լինելը, տրանսպորտի, գազի, հոսանքի և ջրի շատ ցածր սակագները ուշխորհրդային շրջանի հասարակությունում ստեղծել էին մի իրավիճակ, երբ մարդիկ իրենց ապահովված էին զգում: Անբարեկեցության զգացում մարդկանց մոտ առաջանում էր հիմնականում խորհրդային վերնախավերի հետ առնչվելիս և համեմատականներ տանելիս: Այստեղ հստակ նկատելի էր դառնում խորհրդային հասարակության ունեցվածքային շերտավորումը: Չնայած դրան, նույնիսկ նյութական կարիքները մի կերպ բավարարող ընտանիքները ընդունվածի համաձայն իրենք իրենց «միջին» էին անվանում: Այսինքն, խորհրդային շրջանում հասարակության միջավայրում ձևավորվել էին աղքատության նորմալիզացման այնպիսի պրակտիկաներ, որոնք նպաստում էին հասարակության կառավարելի պահելուն և կառավարության առջև սոցիալական բնույթի խնդիրներ չբարձրացնելուն:

Այս առումով հատկանշական է, որ իրականացված հետազոտության որակական տվյալները ցույց են տալիս, որ աղքատության նորմալիզացումը բավական տարածված երևույթ է նաև մեր օրերում: Որոշները այն կապում են աղքատությունը ամոթ համարելու հետ, երբ մարդիկ չնայած գիտակցում են իրենց աղքատ լինելը, սակայն չեն ցանկանում այդ կարգավիճակի տակ մտնել, բնութագրելով իրենց սոցիալական վիճակը որպես «միջին» կամ «նորմալ»: Սակայն, ըստ որոշ հետազոտական տվյալների էլ մարդիկ ոչ թե հատուկ են խուսափում աղքատ գնահատվելուց, այլ՝ պարզապես, աղքատության գնահատման նրանց չափանիշները այնքան ցածր են, որ աղքատ համարում են միայն այն մարդկանց, ովքեր ապրում են թերսնման և այլ ծայրահեղ զրկանքների պայմաններում: Օրինակ, չեն կարողանում ապահովել հագուստի նվազագույն պահանջները և հագնում են ուրիշների հին

հագուստը, ձմռանը չեն կարողանում ինքնուրույն հոգալ բնակարանը տաքացնելու պահանջը, սննունդը հիմնականում բաղկացած է կարտոֆիլից ու էժան հացամթերքներից: Իսկ եթե ամսվա մեջ մի քանի անգամ կարողանում են մսով կերակուր պատրաստել, էժան հագուստ գնել, բայց չեն կարողանում ապահովել առողջապահական, կրթական, բնակարանի լիարժեք ջեռուցման, հանգստի և ժամանցի նվազագույն կարիքները, միևնույն է, բնութագրում են իրենց վիճակը որպես «նորմալ» կամ «միջին»: Հետազոտության մասնակցած բանասացներից շատերի կարծիքով, աղքատության հետ ծայրահեղ հաշտվողականությունը, չնայած խորհրդային հետքին, իր ներկայիս պատկերը ստացավ 1990-ականների առաջին կեսին, այսպես կոչված «մութ ու ցուրտ» տարիներին: Այդ տարիներին բնակչության գերակշռող մեծամասնությունը կանգնեց գոյատևման խնդրի առջև: Մարդիկ դժվարանում էին ոչ միայն որակյալ սնունդ, այլ ընդհանրապես սնունդ հայթայթելու գործում: Դժվարամատչելի էին առաջնային նշանակության սննդամթերքները՝ հացը, ձուն, կաթնամթերք: Մսամթերքի օգտագործումը խիստ կրճատվել էր և շատերը կարող էին թույլ տալ իրենց մսամթերք միայն տոնական օրերին: Լրջագույն խնդիր էր բնակարանի ջեռուցումը: Այս իրավիճակը աստիճանաբար սկսվեց հաղթահարվել 1990-ականների երկրորդ կեսին: Եվ բոլոր նրանք, ովքեր արդեն կարողանում էին հոգալ պահանջմունքների գոյատևման շեմից ավելին, համարում էին իրենց սոցիալական վիճակը «նորմալ» և «միջին»: Հատկանշական է, որ հասարակության մեջ տարածված այս սուբյեկտիվ մոտեցումը օբյեկտիվացվում էր պետականորեն սահմանված աղքատության գնահատման ցուցանիշների և կառավարության ֆինանսատնտեսական ու սոցիալական քաղաքականության միջոցով: Ընդհուպ մինչև 2000-ականների կեսերը պարենային նվազագույն զամբյուղի պարունակության 70%-ից ավելին կազմում էին հացամթերքները և կարտոֆիլը: Այսինքն, պետականորեն սահմանված աղքատության սահմանը դա մարդու մի կերպ գոյատևելու սահմանն էր: Դրանից վերև ապրողները համարվում էին «ոչ աղքատ» կամ բնակչության մեջ ընդունված արտահայտությամբ «նորմալ»: Հարկ է նկատել, որ ոչ միայն այս հետազոտության տվյալներն են փաստում այդ մասին, այլև՝ 2000-ականների առաջին տասնամյակում իրականացրած հետազոտությունները նույնպես (Dudwick 2002, 126: Խառատյան 2007, 520: Մարության 2007, 470):

Աղքատությունը ամոթ համարելու դիսկուրսը և աղքատությունը թաքցնելու պրակտիկաները, մի կողմից, իրենց ազդեցությունն են թողնում մարդկանց վարքագծի վրա և, մյուս կողմից, կառավարության քաղաքականությունների վրա: Մարդիկ համարելով իրենց վիճակը «նորմալ» ավելի կրավորական են դառնում կառավարության սոցիալական քաղաքականության նկատմամբ, իսկ կառավարությունը ավելի քիչ է մտածում աղքատության հաղթահարմանն ուղղված նշանակալի քայլեր իրականացնելու մասին:

Հետազոտության տվյալներում հանդիպում են նաև նյութեր, որոնք վերաբերում են աղքատության ու հարստության համեմատությանը: Ըստ այդմ, աղքատությունը և հարստությունը դիտվում են որպես իրար հակադրվող երևույթներ: Եթե աղքատությունը համարվում է ամոթ, ապա հարստությունը դիտվում է որպես ցանկալի, երանելի մի բան: Իսկ հարստանալուն ուղղված գործունեությունը համարվում է ամենից գովելին ու ընդօրինակելին: Ըստ այդմ, եթե աղքատը համարվում է անխելք, ապա հարուստը համարվում է խելքով, աղքատությունը այս առումով հաճախ նաև համարվում է արգահատելի մի բան, որը կապվում է մարդու անխելքության կամ ալարկոտության հետ:

Համարվում է, որ աղքատը իր խելքից է աղքատ կամ աղքատները չեն սիրում աշխատել և գերադասում են մի փոքր օգնություն ստանալ, քան՝ լինել նախաձեռնող ու աշխատասեր: Այսինքն, աղքատը համարվում է մեղավոր ինքն իր աղքատության մեջ և դատապարտվում դրա համար: Հետաքրքիր է, որ այս մոտեցումը հանդիպում է ինչպես իրենց «նորմալ» համարող սովորական քաղաքացիների հետ անցկացված հարցազրույցներում, այնպես էլ փորձագիտական հարցազրույցներում: Միևնույն ժամանակ, այս մոտեցումը հստակ արտացոլված էր նաև նախկին կառավարող վերնախավերի ներկայացուցիչների հարցազրույցներում: Ավելին, նման մոտեցում, նկատելի է նաև Թավշյա հեղափոխությանը հաջորդած շրջանում, հատկապես ազատական հայացքներ ունեցող նոր կառավարության անդամների հարկային ու սոցիալական քաղաքականությանը վերաբերող մոտեցումներում:

Ինչ վերաբերում է հարստության ու հարստանալու տարածված պատումներին, ապա դրանցում հստակորեն գովաբանվում են հարուստները: Աղքատի անխելքության մեղադրանքին հակադրվում է հարուստի խելքով լինելու մասին գովաբանությունը: Օրինակ, բոլոր հարուստ օլիգարխները անկախ ամեն ինչից համարվում են խելքով մարդիկ, որովհետև «եթե խելքով չլինեին չէին հարստանա»: Առկա է նաև նրանց հարստանալու ճանապարհը օրինակելի համարելու մտայնությունը: Կարևոր է սակայն նկատել, որ մինչև Թավշյա հեղափոխությունը, հեղինակի կողմից իրականացրած նախորդ հետազոտությունների և այս հետազոտության նյութերի համեմատությունը թույլ է տալիս ասել, որ հասարակական կարծիքում այս հարցի շուրջ որոշ փոփոխություններ կան: Եթե նախկինում հարստանալու բոլոր ճանապարհները, այդ թվում և կոռուպցիան արդարացվում էր, ապա՝ ներկայումս նկատելի է այն դատապարտելու միտում: Այսինքն, նախկինում տիրապետող է ամեն գնով, այդ թվում և աղքատներին հարստահարելու հաշվին հարստանալը արդարացնելու մտայնությունը, համարելով դա «շնորհքի կամ բաշարելու հարց»: Հեղափոխությունից հետո զարտուղի ճանապարհներով և «սովորական» մարդկանց հաշվին հարստանալը համարվում է դատապարտելի: Կարելի է ասել, որ արժեքային առումով, ներկայումս նկատելի է արդարության արժևորման աճ, ինչը դրական երևույթ է թե հասարակական կարծիքի փոփոխության և թե կառավարության սոցիալական քաղաքականության ուղղորդման տեսանկյունից:

Այսպիսով, աղքատության հետ կապված տարածված դիսկուրսը և դրա հիմնական պատումները, համաձայն որոնց մի կողմից աղքատությունը համարվում է ամոթալի ու դատապարտելի մի բան և դրա մեղքը գցվում է հենց իրենց աղքատների վրա, խոչընդոտում է սոցիալական քաղաքականության ոլորտի պրակտիկաները աղքատամետ դարձնելուն, ինչը թույլ կտար սոցիալական քաղաքականությունը դարձնել իրականում ավելի ներառական և աղքատության հաղթահարման գործընթացը բացի տնտեսական զարգացման հետ կապելը, կապվեր նաև մարդկային զարգացման հետ: Այն բարենպաստ հող է ստեղծում նաև աղքատության հաղթահարմանն ուղղված քաղաքականությունում սոցիալական նպաստներ բաժանելու պրակտիկայի շարունակման համար և չի նպաստում աղքատների հասարակական ու տնտեսական ակտիվության վերականգնմանն ուղղված պրակտիկաների ներդրմանը: Ընդհանրապես, աղքատության մեջ հենց իրենց աղքատներին մեղադրելը լայն առումով հանգեցնում է այն բանին, որ կառավարությունը այդ խնդիրը համարում է ավելի շատ հենց աղքատների գործը, քան՝ կառավարության: Իսկ կառավարության քաղաքականությունը ուղղորդվում է հիմնականում հարուստների

շահերի սպասարկմանը: Այս մոտեցումը շատ հստակ էր արտացոլված նախկին իշխանությունների քաղաքականության մեջ[1]: Նկատենք, որ ըստ փորձագիտական կարծիքների, Թավշյա հեղափոխությունից հետո ձևավորված ժամանակավոր կառավարության գործունեությունն էլ հաշվի չի առնում անապահով խավերի կարիքները և կառավարմանը ու քաղաքականություններին սոցիալական դեմք հաղորդելու տեսանկյունից նշանակալի քայլեր չի նախաձեռնել: Ավելին, այդ կառավարության կողմից քարոզվող համահարթ հարկային քաղաքականությունը ավելի օգտակար է համարվում բարձր եկամուտներ ունեցողների շահերի պաշտպանությանը և վնասակար ցածր եկամուտ ունեցողների համար: Այս առումով, կառավարության մոտեցումները սոցիալական քաղաքականության տեսանկյունից դեռևս մնում են մտահոգիչ:

Հարկ է նկատել նաև, որ մտածողության նշված կարծրատիպերը ոչ միայն կառավարման սոցիալական ուղղվածության քաղաքականությունների վրա են բացասաբար ազդում, այլև՝ հասարակության անապահով խավերի մեջ աղքատություն ձևավորող քաղաքականությունների դեմ բողոքի ու պայքարի պրակտիկաներ ձևավորելու վրա, քանի որ միտված են արդարացնելու հարուստների կողմից աղքատների շահագործումը և նրանց շահերի պաշտպանությանն ուղղված քաղաքականությունները:

Այս առումով, կարելի է ասել, որ աղքատության նվազեցմանն ուղղված սոցիալական քաղաքականության կարևոր բաղադրիչ կարող է դառնալ աղքատության մշակույթի հաղթահարմանն հիմնախնդիրը՝ նպատակ ունենալով փոխել աղքատության ու ամոթի, աղքատության ու նորմալի, հարստության ու նորմալի վերաբերյալ գործող ընկալումներն ու դրանց հետ կապված առօրյա դիսկուրսներն ու պրակտիկաները, ինչպես նաև վերականգնողական սոցիալական պրակտիկաների ներդրման միջոցով օժանդակել աղքատների կարողությունների զարգացմանը, սոցիալական մեկուսացվածության և հնարավորությունների անհավասարության վերացմանը:

1.4 Անհավասարության դիսկուրսը և աղքատությունը

Ինչպես վերը նշվեց, ըստ փորձագիտական կարծիքների, աղքատության պատճառներից է համարվում այն, որ աղքատ խավերը չեն գիտակցում, որ աղքատությունը ձևավորվում ու վերարտադրվում է հարուստ խավերի կողմից*: Եթե հասարակության մեջ հայտնվեն ուժեր, ովքեր այդ մասին կբարձրաձայնեն և կձևակերպեն այն, որպես հասարակական պահանջ, ապա այն կարող է դառնալ իրավիճակի փոփոխության պատճառ*: ***Այս գիտակցումը***

[1] Նշվածի հանրային հնչեղություն ստացած դրսևորումներից առավել հիշատակման արժանի օրինակներից է 6-րդ գումարման ԱԺ Առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի և ՀՀԿ-ական մի շարք պատգամավորների սպառողական ապրանքների գների թանկացման առնչությամբ արտահայտած այն կարծիքը, թե աղքատները միևնույն է չեն օգտվում որակյալ ու սննդարար սննդամթերքների տեսակներից և կարելի է հանգիստ թանկացնել դրանք: Այս օրինակը ցույց է տալիս, որ նույնիսկ ի պաշտոնե անապահով խավերի շահերը ներկայացնող պետական բարձրագույն պաշտոն զբաղեցնող պաշտոնյան հստակ պաշտպանում է հարուստ տնտեսվարողների շահերին ուղղված գների թանկացման քաղաքականությունը:

կարող է նպաստել նաև սոցիալական ոլորտի ծրագրերի մշակմանը աղքատ խավերի մասնակցային ակտիվության ձևավորմանը, ինչը թույլ կտա սոցիալական աջակցության քաղաքականությունը իրականացնել շահառուների կարիքների հաշվառման միջոցով:

Ըստ հետազոտական տվյալների, աղքատության մշակույթի ձևավորման ու խորացման գլխավոր պատճառներից է համարվում հասարակությունում անհավասարության գաղափարի տարածվածությունը: *Որքան էլ տարօրինակ կարող է թվալ, սակայն հայաստանյան հասարակությունում, և հատկապես, աղքատ խավերում իրականորեն ավելի թույլ է շրջանառվում սեփական շահերից բխող հավասարության գաղափարները, քան՝ հարուստ խավերի կողմից տարբեր միջոցներով քարոզվող անհավասարության:* Ստացվում է այնպես, որ աղքատ խավերը վերարտադրում են հարուստ խավերի գաղափարախոսությունը, դրանից բխող պրակտիկաները, ինչն էլ իր հերթին հանգեցնում է հարուստներից աղքատների կախվածությանը ու աղքատության համակարգային պատճառների վերարտադրությանը: *Այսինքն, աղքատներից շատերի համար աղքատության հաղթահարումը պատկերացվում է ներկայիս հարուստների անցած ճանապարհի կրկնելու ուղով*: Հասկանալի է, որ այս մոտեցման միջոցով հնարավոր չէ պայքարել աղքատության նվազեցման համար: Լավագույն դեպքում, այդ ճանապարհը հնարավորություն կտա որոշ աղքատների հաղթահարել իրենց աղքատությունը, սակայն կպահպանի անհավասարության ու շահագործման պրակտիկաները և աղքատությունը, ընդհանրապես:

Գրանցված նյութերում խիստ արտահայտված է այն կարծրատիպը, որ աղքատությունն ու հարստությունը ոչ թե պարզապես սոցիալական վիճակ է, այլ՝ մարդկանց որակավորման ու դասակարգման չափանիշներ: Այստեղ հստակ նկատելի են արտոնյալության ու ոչ արտոնյալության բաղադրիչներ: Ծատերի մոտ բնական է ընդունվում, որ աղքատը պետք է ենթարկվի զրկանքների, որ նրա երեխաները չեն կարող ստանալ որակյալ կրթություն, առողջապահություն, դիտվել հավասար մնացած մարդկանց հետ: Հետաքրքիր է, որ չնայած աղքատների հանդեպ տարածված կարեկցանքին, նրանց հանդեպ վերաբերմունքում նկատելի է հասարակության մնացած խավերի համեմատ նրանց ավելի անհավասար ու քիչ արտոնյալ ընկալումը: Այսինքն, կարելի է ասել, որ մեր հասարակությունում կան տարածված կարծրատիպեր, համաձայն որոնց աղքատներին պետք է օգնել որպեսզի նրանք գոյատևեն, սակայն նրանց կարելի է նաև չվերաբերվել նրանց որպես հավասարի: Այսինքն, հասարակության մեջ տարածված մոտեցումների համաձայն, որպես մարդ, աղքատների պահանջմունքները չեն կարող լինել մնացածին հավասար: Նրանց պահանջմունքները կարող են լինել *գոյատևման բնույթի* և եթե նրանք ինքնուրույն չեն կարողանում այդ պահանջմունքները բավարարել, ապա միայն այդ խնդրի լուծման համար նրանց կարելի է աջակցություն ցուցաբերել: Սակայն, եթե նրանք ունեն իրենց երեխաներին որակյալ կրթություն տալու կամ որակյալ առողջապահություն ստանալու պահանջմունքներ, ապա դա դիտարկվում է որպես ոչ համարժեք պահանջմունք: Այսինքն, ըստ որակական հետազոտական տվյալների նկատելի է այն մտայնությունը, համաձայն որի աղքատները ոչ միայն չեն ընկալվում ու դիտարկվում որպես մնացածին հավասար մարդ, այլև՝ տարօրինակ է համարվում նրանցմարդկային զարգացման ու արժանապատիվ ապրելու հավասար հնարավորությունների ստեղծումը: Այս առումով, թե հասարակական վերաբերմունքում և թե պետական քաղաքականությունում նկատելի է խտրական

վերաբերմունք, որը բխում է աղքատների հանդեպ հասարակությունում տարածված անհավասարության դիսկուրսից:

Նման վերաբերմունքի գլխավոր պատճառներից մեկն, ըստ փորձագիտական կարծիքների, մարդու որպես ինքնին և բացարձակ արժեքի հասարակական անբավարար ընալումներն են: Աղքատությունը մեր հասարակական ընկալումներում մարդուն միանգամից դնում է ոչ միայն անհավասար կարգավիճակային առումով, այլև՝ հնարավորությունների: Աղքատը, որպես մարդ տարածված ընկալումների համաձայն, մյուսներին հավասար մարդ չէ և հետևաբար չի կարող օգտվել մյուսների համար սահմանված հնարավորություններից:

Ըստ որոշ փորձագետների, այս ընկալումների առաջացման պատճառները կապված են անկախության շրջանում հասարակությունում տեղի ունեցած շերտավորման և բևեռացման գործընթացների հետ, որոնք ձևավորել են խտրականության ու անհավասարության պրակտիկաներ իշխող հարուստ վերնախավերի միջավայրում և նրանցից փոխանցվել հասարակության մնացած խավերին: Այս խնդրի վրա ազդում է նաև մեր հասարակությունում խմբակենտրոն արժեքների գերակայությունը անհատակենտրոն արժեքներին, ինչի հետևանքում, որոշ խմբեր և դրանց պատկանող անհատները հնարավորությունների տեսանկյունից, ավելի արտոնյալ են, քան՝ մյուսները: Իշխող էլիտաների ազդեցությամբ հասարակությունում ձևավորվել են հիերարխիաներ, որոնց վերևում իշխող հարուստների ընտանիքներն են, իսկ ամենից ներքևում՝ աղքատներն ու անապահովները: Այս խմբակենտրոն հիերարխիկ կառուցվածքը ձևավորել է անհավասարության իշխանական դիսկուրս և պրակտիկաներ, որոնցից ամենից շատ տուժում են հիերխիայի ստորոտում գտնվող սոցիալական խմբերը:

Բացասական երևույթներից մեկն էլ այն է, որ աղքատների անհավասար վիճակը չնայած կարեկցվում է հասարակակության լայն զանգվածների կողմից, սակայն, համարվում է բնական:

Անհավասարության դիսկուրսի և պրակտիկաների հետ կապված նշված երևույթները բացասաբար են ազդում աղքատության նվազեցման արդյունավետ քաղաքականությունների մշակման վրա, քանի որ քաղաքականության պրակտիկաների մակարդակում նույնպես նկատվում է բացառապես աղքատների գոյատևման պահանջմունքների բավարարմանն ուղղված ծրագրերի գերակայությունը, նրանց մարդկային զարգացման համար հավասար հնարավորությունների ձևավորման ծրագրերին, ինչը զգալիորեն կարող էր մեծացնել աղքատության նվազեցման քաղաքականությունների արդյունավետությունը, կայունությունը ու անշրջելիությունը:

1.5 Աղքատությունը քողարկելու պրակտիկաները

Աղքատ խավերի մեջ տարածված է նաև սեփական աղքատությունը թաքցնելու տարբեր պրակտիկաներ, որի հիմնական պատճառը համարվում է աղքատ չհամարվելու վախը և ամոթը: Այդ պատճառով, նրանք հաճախ փորձում են ստեղծել միջին կարողության մարդու սպառողականության պատրանք: Դրա համար նրանք պատրաստ են նույնիսկ պարք անել կամ վարկ վերցնել: Ասվածի շատ բնորոշ օրինակ կարելի է համարել փորձագիտական հարցազրույցի մասնակից սոցիալական աշխատողներից մեկի

պատմությունը: Համաձայն դրա ընտանեկան նպաստ ստացող ընտանիքներից մեկը հյուրասենյակը կահավորել էր բավականին ներկայանալի ձևով, ինչը առաջին հայացքից շփոթության մեջ է գցել սոցիալական աշխատողին: Ընտանիքը հյուրասենյակում տեղադրել է համեմատաբար արժեքավոր և մոդայիկ համարվող բազմոց, բազկաթոռներ, կահույք և նոր մոդելի «սմարթ» հեռուստացույց: Սակայն ցնցող է եղել նույն բնակարանի ննջասենյակների անմխիթար վիճակը: Դրանցում բացակայել է հատակը, պատերն ընդհանրապես ներկված չեն եղել, համարյա բացակայել է կահույքը: Հարցուփորձից պարզվել է, որ այդ հյուրասենյակը կահավորվել է բարեկամներից վերցված պարտքի միջոցով: Նման դեպքերի նկարագրություններ կարելի է հանդիպել նաև այլ հարցազրույցներում: Պարզվում է, որ աղքատների մեջ բավական տարածված պրակտիկա է, երբ աղքատ ընտանիքները պարտք են վերցնում, վերանորոգում և կահավորում հյուրասենյակը, տեղադրում այնտեղ «սմարթ» հեռուստացույց, սակայն տան մնացած հատվածները և իրենց ապրելակերպն ընդհանրապես ծայրահեղ անմխիթար վիճակում եմ: Դրա հիմնական բացատրություն այն է, որ հյուրասենյակը հարևանների, բարեկամների և տուն այցելող այլ մարդկանց ներկայանալի ու նրանց վրա տպավորություն թողնող տարածքն է, որի միջոցով տուն այցելող հարևաններն ու ծանոթները կարծիք են կազմում տվյալ ընտանիքի սոցիալական կարգավիճակի մասին: Կարգավիճակի պահպանման և աղքատ չհամարվելու ամոթի մտավախության պատճառով մարդիկ հաճախ իրականացնում են ոչ ռացիոնալ ծախսեր, ինչը խանգարում է նրանց ավելի ռացիոնալ կազմակերպել իրենց ընտանեկան բյուջեն: Այս շարքում կարելի է դիտարկել նաև Նոր տարվա սեղան գցելու կամ հարսանիք գնալու նպատակով նոր հագուստ գնելու համար պարտքեր վերցնելը: Հանդիպում են նաև դեպքեր, երբ աղքատության մեջ ապրող ընտանիքը հարևանների ու բարեկամների աչքում «խեղճ չերևալու» համար, վարկ է վերցնում, որպեսզի «արտասահմանյան» մեքենա գնի:

Ներկայացված վարքագծի հիմնական պատճառն այն է, որ աղքատի կարգավիճակը հանգեցնում է ծանոթների, հարևանների և նույնիսկ բարեկամների վերաբերմունքի փոփոխությանը: Աղքատի կարգավիճակում ավելի մեծ է միջավայրից մեկուսացման վտանգը, ինչի նաև ռիսկի տակ է դնում ծանոթներից ու բարեկամներից անհրաժեշտության դեպքում նյութական աջակցություն ստանալու հնարավորությունը:

Համաձայն ավելի վաղ արված հետազոտությունների այս երևույթը նոր չէ: Արդեն 2000-ականների սկզբին իրականացված հետազոտությունները փաստում են, որ աղքատի կարգավիճակը կարող էր դառնալ խտրական վերաբերմունքի պատճառ (Պետրոսյան 2001, 375): Ըստ այս հետազոտության որակական տվյալների, աղքատների համար ավելի բարդ է պարտքով դրամ ճարելը, նրանց ավելի քիչ են վստահում, ավելի հաճախ անբարեհաճ վերաբերմունքի արժանացնում: Հարցազրույցների մասնակցած առողջապահության ոլորտի աշխատակիցներից մեկի տիպիկ բնութագրմամբ մարդու տեսքից որոշվում է, թե արդյո՞ք նա ընդունակ է ծառայության դիմաց փոխհատուցել բժշկին: Եթե արտաքինից նման վստահություն մարդը չի ներշնչում և անապահովի տպավորություն է թողնում, ապա կարող է արժանանալ անբարեհաճ վերաբեմունքի: Աղքատ տեսքը խոչընդոտ կարող է հանդիսանալ նույնիսկ աշխատանքի ընդունվելիս: Սովորաբար գործատուները ավելի հակված են լինում վստահել և աշխատանքի ընդունել տեսքով ոչ աղքատ մարդկանց:

Ըստ անապահով խավերի ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցների տվյալների աղքատների այս շերտերին բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանք իրենց կարգավիճակից ամաչելու պատճառով խուսափում են այլ մարդկանց հետ շփումներից: Մարդիկ նույնպես խուսափում են աղքատության մեջ հայտնվածների հետ փոխհարաբերություններից: Նկատենք, որ սա նոր երևույթ չէ և նման երևույթներ գրանցվել են նաև այլ հետազոտողների կողմից (Gomart 2002, 185-186. Պետրոսյան 2001, 374):

Այս հետազոտության շրջանակում իրականացված հարցազրույցներում բազմաթիվ են վկայություններն այն մասին, որ հաճախ հարսանիքներ կամ այլ կարգի հանդիսություններ կազմակերպողները ակնկալում եմ, որ հրավիրյալներից որպես նվեր կստանան գումար կամ թանկարժեք նվերներ: Դրանով ենթադրվում է, որ նրանք որոշ առումով կփոխհատուցեն իրենց ծախսերը: Այդ պատճառով, այնպիսի բարեկամները ովքեր համարվում են անվճարունակ, հաճախ նման հանդիսություններին չեն հրավիրվում, քանի որ համարվում են ավելորդ բեռ: Իդեպ, նման վկայություններ հանդիպում են ինչպես անապահով խավերի, այնպես էլ բնակչության այլ խավերը ներկայացնող հարցվողների հետ արված հարցազրույցներում:

Հաճախ, նման տնային տնտեսությունների անդամները չեն հրավիրվում նմանատիպ հանդիսություններին նաև իրենց հասարակական կարգավիճակի պատճառով: Նույնիսկ բարեկամները հրաժարվում են հասարակական կարծիքում աղքատի կարգավիճակ ունեցող հարազատին հրավիրել հանդիսություններին, ամաչելով ներկաների կարծիքից:

Չունենանալով պատշաճ ներկայանալու նյութական միջոցներ, աղքատ մարդիկ հաճախ իրենք են խուսափում հասարակական միջավայրերում հայտնվելուց: Կան աղքատներ, ովքեր խուսափում են ցերեկով մարդաշատ տեղեր դուրս գալուց, ինչը բացի այն բանից, որ նրանց մեկուսացնում է հասարակական միջավայրերից, մեծացնում է նաև նրանց անօգնականությունը, անհուսության զգացումը, աղքատության խորացման ու խրոնիկական դառնալու ռիսկերը:

Աղքատության մշակույթին բնորոշ մեկ այլ հիմնախնդիր է համարվում *կարճաժամկետ մտածողության ու ծախսերը պլանավորելու անընդունակությունը:* Ճարունակաբար աղքատ վիճակում գտնվող ընտանիքներում բավական տարածված է եղած գումարները պլանավորել ու հաշվարկով ապրելու անընդունակությունը, ինչը հանգեցնում է այն բանին, որ ամսվա սկզբում սահմանափակ գումարը միագամից ծախսվում է մի քանի օրում ու հետո նորից ընտանիքը հայտնվում է պարտքերի մեջ: Ի տարբերություն նման ընտանիքների, աղքատության մեջ գտնվող այն ընտանիքները ովքեր կարողանում են ճիշտ հաշվարկներ անել, կարողանում են սահմանափակ գումարի պայմաններում գոյատևել և էլ ավելի չխորացնել իրենց սոցիալական անմխիթար վիճակը:

Երկրորդ դեպքում ընտանիքը շատ ավելի մեծ հնարավորություն ունի դուրս գալու աղքատության վիճակից, քան առաջին դեպքում: Սա խոսում է այն մասին, որ սոցիալական աջակցության ծրագրերի կատարելագործման և աղքատության հաղթահարմանը միտված ծրագրերի դեպքում, այս տիպի ընտանիքներն ավելի մեծ հնարավորություն ունեն դուրս գալու աղքատությունից, քան առաջինները: Հետևաբար, *քաղաքականության մշակման դեպքում կարևոր է հաշվի առնել ընտանիքների այս ունակության առկայության կամ*

բացակայության գործոնը և ընտանեկան ծախսերը հաշվարկելու ունակության զարգացումը նույնպես մտցվի քաղաքականության խնդիրների մեջ:

Գլուխ 2. Սոցիալական աջակցության պետական քաղաքականության հիմնական առանձնահատկությունները. Դրական ու բացասական կողմերը

Սկսած 2014 թ. Հայաստանում սոցիալական աջակցության ոլորտի քաղաքականությունը մտել է նոր փուլ: Պետական երկու կարևոր փաստաթղթերում ուղենշվեցին սոցիալական աջակցության քաղաքականության սկզբունքային կարևոր փոփոխություններ, որոնք եթե հաջողվի արդյունավետորեն իրագործել, ապա խիստ հուսադրող միտումներ ու արդյունքներ կգրանցեն աղքատության հաղթահարման ուղղությամբ:

2.1 Սոցիալական աջակցության քաղաքականությունը ՀՀ 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում՝ ՀԶԾ-ում:

Սոցիալական աջակցության քաղաքականության բարեփոխման համար կարևոր նշանակություն ունի ՀԶԾ-ում սոցիալական աջակցության քաղաքականության նոր գաղափարախոսության ձևակերպումն ու առաջադրումը: Եթե նախկինում սոցիալական աջակցության քաղաքականությունը պարզապես բխում է սոցիալական արդարության ազատական այն հայեցակարգից, համաձայն որի հասարակության մնացած խավերը պետք է օժանդակեն աղքատ խավերի զոյատևմանն ու նյութական առաջնային կարիքների բավարարմանը, ապա կարելի է ասել, որ ՀԶԾ-ում առաջարկվում են սոցիալական արդարության արդիականացված հայեցակարգից բխող նոր մոտեցումներ: Խոսքը վերաբերում է *մարդկային զարգացման* գաղափարի վրա կառուցված սոցիալական արդարության մոդելին (Sen 1999): Համաձայն այս մոդելի, որի տեսական հիմքերը ձևավորվել են 1990-ականներին և քաղաքականությունների մշակման մեջ է ներառվել 2000-ականների կեսերին, սոցիալական արդարության հիմքը կազմում է մարդկային զարգացումը: Մարդկային զարգացման հայեցակարգի համաձայն, սոցիալական արդարությունը ոչ միայն ներառում է աղքատ ու սոցիալապես անապահով խավերին նյութական կարիքների բավարարմանն ուղղված սոցիալական աջակցություն, այլ նաև կյանքի որակի ու տևողության վրա դրականորեն ազդող առողջապահական, կրթական ու սոցիալական ծառայությունների մատչելիություն, ինչպեսև մարդու կարողությունների զարգացման ու իրացման շարունակական օժանդակություն:

Ահա այս մոտեցումներն են, որ կարելի է տեսնել ՀԶԾ-ում, ինչը որ քաղաքականության ծրագրավորման տեսանկյունից բավական լուրջ քայլ է դեպի առաջ:

Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը ըստ Հայաստանի զարգացման ռազմավարական ծրագրի համարվում է ծրագրային չորս գերակայություններից երրորդը (ՀԶԾ 2014, 16): Կարևոր է նկատել, որ սոցիալական պաշտպանության բարելավման շրջագծում պլանավորվում է ոչ միայն սոցիալական աջակցության ծրագրերի հասցեականության ու նպատակայնության բարձրացման նպատակաուղղված բարեփոխումներ, այլև՝ սոցիալական աջակցության ծրագրերը

աղքատության հաղթահարմանը ծառայեցնելուն: Այս առումով կարևոր է, որ ՀԶԾ-ում ծրագրավորվում է նախատեսված ժամկետներում սոցիալական աջակցության դրամական ձևերից անցում կատարել դեպի սոցիալական համապարփակ փաթեթների տրամադրմանը, որոնք իրենց մեջ ներառում են առողջապահական, կրթական և սոցիալական ծառայությունների միջոցով սոցիալական աջակցության ամբողջացում: Այս նպատակադրումը շատ հուսադրող է ու նաև համահունչ ներկայացվող հետազոտության խնդիրներին, որոնց մեջ կարևոր տեղ են գրավում աղքատության և այն վերարտադրող մշակույթի հաղթահարման ուղղված սկզբունքների ու մոտեցումների բացահայտումը և դրանք սոցիալական աջակցության քաղաքականության միջոցով հաղթահարելու հնարավորությունների քննարկումը:

ՀԶԾ-ում կարևոր ծրագրային դրույթներից է նաև սոցիալական աջակցության քաղաքականության մեջ առանցքային համարվող ընտանեկան նպաստների ծրագրի գաղափարախոսության փոփոխության նպատակադրումը: Այն ծրագրավորվում է պարզապես ընտանիքի գոյատևման խնդրի լուծմանը օժանդակող ծրագրից դարձնել ընտանիքի կենսամակարդակի բարցրածմանն ուղղված ծրագրի: ՀԶԾ այս նպատակադրումների քաղաքականությունների մակարդակում իրականացման կարևոր հիմք են նաև օրենսդրական ոլորտում՝ ՀՀ սոցիալական աջակցության օրենքում կատարված փոփոխությունները և նոր օրենքի ընդունումը:

2.2 Սոցիալական աջակցության քաղաքականության օրենդրական հիմքերի բարեփոխումները

Այս պարագրաֆում սոցիալական աջակցության քաղաքականության օրենսդրական հիմքերի բարելավման հիմնախնդիրը կքննարկվի առանցքային ծրագրերից մեկի՝ *Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների* ծրագրի օրինակով: Այն կդիտարկվի սոցիալական աջակցության քաղաքականության արդյունավետության աստիճանը բարձրացնելու, աղքատության մշակույթի հաղթահարման և նպաստառու ընտանիքներում աղքատության վերարտադրությունը հաղթահարելու դիտանկյունից:

ՀԶԾ-ում սոցիալական աջակցության ոլորտի բարեփոխումների ծրագրային նպատակադրումներն ամրապնդվում են համապատասխան օրենսդրական փոփոխություններով: 2015 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտավ ՀՀ Սոցիալական աջակցության նոր օրենքը: Իսկ 2017 թվականի հունվարի 1-ից նույն օրենքի հիման վրա ուժի մեջ է մտել անցումը *ինտեգրված սոցիալական ծառայությունների* մատուցմանը:

Ճիշտ է սոցիալական աջակցության ոլորտում և հատկապես *ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների* ծրագրի միջոցով մատուցվող ծառայություններում շոշափելի փոփոխություններ դեռևս չկան, սակայն առաջիկայում նախատեսվում է անցնել սոցիալական ծառայությունից սոցիալական դեպքի վարման պրակտիկային: Սա նշանակում է, որ եթե նախկին օրենքի համաձայն սոցիալական ծառայողի գործառույթը սահմանափակվում էր ընդամենը սոցիալապես անապահով ընտանիքների գրանցումով, ապա համաձայն ներկայիս օրենքի նրանք սոցիալապես անապահով ընտանիքների հետ իրականացնելու են սոցիալական ընդգրկուն աշխատանք: Այն ընդգրկելու է անձի կամ ընտանիքի սոցիալական կարիքների գնահատումից սկսած,

անհրաժեշտ ու հասանելի ռեսուրսների որոնումն ու կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի ծրագրավորումը:

Սոցիալական դեպքի վարման համար համակարգում ներդրվելու են սոցիալական աշխատողի և սոցիալական սպասարկողի հաստիքները, ինչի շնորհիվ սոցիալապես անապահով և խոցելի բնակչությանը տրամադրվող նպաստների դրամական ձևից միջնաժամկետ հեռանկարում աստիճանականորեն անցում է կատարվելու *սոցիալական աջակցության համալիր փաթեթների* տրամադրմանը:

Սոցիալական աջակցության համալիր փաթեթների տրամադրման նպատակը սոցիալապես անապահով ու խոցելի խավերի կարողությունների ու հնարավորությունների համալիր ընդլայնումն է: Օրենքով նախատեսվում է, որ այն ներառելու է սոցիալական ծառայությունների մատուցման, կրթական, առողջապահական, բնակարանային ու այլ կարիքների բավարարումը *(ՀՀ Սոցիալական աշխատանքի մասին օրենք, 17-18)*: Ըստ նոր օրենքի, այն ուղղված է լինելու նաև աղքատների կարողությունների ու հմտությունների զարգացմանը՝ աշխատանքային շուկայում տեղ գտնելու ու կենսամակարդակի կայուն աճ ապահովելու համար:

Կարևոր է նկատել, որ ներկայումս սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում ուղղորդված է նյութական ծայրահեղ աղքատության հաղթահարմանը, ինչը հաճախ օժանդակում է ընտանիքին մեղմելու նյութական աղքատության ծայրահեղ վիճակը, սակայն իհարկե շատ խորհրդանշական դեր է կատարում ընտանիքի ծայրահեղ աղքատությունը հաղթահարելու համար:

Նոր օրենքով սահմանված է նպաստառու ընտանիքին բացի դրամական օժանդակությունը ապահովել նաև խորհրդատվական օգնությամբ: Սա շատ կարևոր օգնության ձև է, քանի որ ինչպես ցույց են տալիս հետազոտական տվյալները աղքատ ընտանիքների բնորոշ հիմնախնդիրների մեջ առաջնային է տարբեր հարցերում խորհրդատվության դերը: Առանց անհրաժեշտ խորհրդատվության նրանց զրկանքների աստիճանը զգալիորեն աճում է: Այդ խորհրդատվության անհրաժեշտությունը նկատելի է տարբեր ոլորտներում՝ սկսած առողջապահական, երեխայի կրթության, ընտանեկան բյուջեի պլանավորման հետ կապված հարցերը, վերջացրած դատաիրավական և զբաղվածության:

Նոր օրենքի կարևոր լրացումներից է վերականգնողական օգնության նախատեսումը: Վերականգնողական օգնությունը բազմաբաղադրիչ օգնության ձև է, որը նախատեսված է ցուցաբերել աղքատ ընտանիքներին, աղքատությունից դուրս գալու և կայուն կարգավիճակ ձևավորելու համար: Դրանով նախատեսվում է իրականացնել օգնություն անհրաժեշտ բոլոր այն ոլորտներում, որտեղ ընտանիքի անդամները կարիք կունենան վերականգնելու ինչպես առողջության հետ կապված խնդիրների դեպքում, այնպես էլ աշխատանքի ու մասնագիտական հմտությունների վերականգման, սոցիալ-հոգեբանական և այլ կարգի օժանդակութաան դեպքում:

Ամփոփելով այս պարագրաֆը, կարելի է ասել, որ սոցիալական աջակցության նոր օրենքը նախատեսում է դրական փոփոխություններ և դրանց լիարժեք գործարկման դեպքում այն կարող է զգալիորեն նպաստել աղքատության մշակույթում հայտնված ընտանիքներին դրա հաղթահարմանը և իր կարգավիճակի փոփոխմանը: Այն նաև գաղափարախոսական տեսանկյունից նպաստավոր հող կարող է ստեղծել աղքատների նկատմամբ խտրականության ու անհավասարության վերաբերմունքը հաղթահարելու և

սոցիալական մեկուսացվածության վիճակից դուրս բերելու ու հասարակությանն ինտեգրելու համար:

2.3 Սոցիալական աջակցության ներկայիս իրավիճակը, նպաստառուների կարիքների բնութագիրը և հրատապ խնդիրները

Սոցիալական աջակցության դրամական նպաստի բազային չափը 2018 թ. սահմանվել է 18,000 դրամ, գումարած դրան մինչև 18 տարեկան ընտանիքի անդամներին տրվող օրենքով սահմանված 5,500-7,000 դրամ հավելումները: Տարբեր ընտանիքներում այդ նպաստի միջին չափը տատանվում է 25,000 դրամից մինչև 35,000 դրամ: Ասել, թե այս գումարը բավարար է ընտանիքին աղքատությունից դուրս գալու համար, խիստ չափազանցություն կլինի: Աղքատ ընտանիքների հիմնական մասը այս գումարի միջոցով կարողանում է փակել իր կոմունալ ծախսերը: Շատերը հումորով նկատում են, որ գումարն այնքան քիչ է, որ այն ստանալուց հետո տուն չի հասնում, քանի որ մի պատուհանից ստանում են մյուս պատուհանում անմիջապես մուծում են կոմունալ վճարները ու վերադառնում տուն:

Այսինքն, ներկայումս գործող ընտանեկան նպաստի քաղաքականությունը առայժմ հին ձևաչափի մեջ է: Չնայած, նոր օրենքով սահմանված ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցումը պաշտոնապես սկսվել է 2017 թ. հունվարի 1-ից, բայց ոլորտում վարվող իրական քաղաքականությունը դեռևս մնացել է նախկին վիճակում: Ներկայումս այն անցումային փուլում է, ինչը պետք է խոստովանել, որ դեռ անհրաժեշտ արդյունավետությունը չունի: Այսինքն, ընտանիքի սոցիալական վիճակի բարելավման վրա ազդող որևէ շոշափելի փոփոխություն ընտանեկան նպաստների քաղաքականության իրականացման ոլորտում նկատելի չէ:

Սոցիալական նպաստառու ընտանիքների միջավայրում իրականացված որակական հարցազրույցները թույլ են տալիս ասել, որ ընտանեկան նպաստների ներկայիս քաղաքականությունը չնայած ձևակերպված է որպես նյութական աղքատության նպաստ, սակայն էական դերակատարում չի ունենում նյութական աղքատությունից դուրս գալու համար: Այս նպաստի դրամական չափը աղքատության հաղթահարման նպատակաուղղված որևէ իրատեսական հաշվարկի չի դիմանում: Սրա պատճառը արհեստականորեն ցածր հաշվարկված աղքատության վերին, ստորին ու պարենային շեմերն են: Այս հաշվարկը էլ ավելի անիրատեսական է դառնում, եթե հաշվի ենք առնում, որ սոցիալական աջակցության նոր օրենքի համաձայն ենթադրվում է, որ քաղաքականությունը պետք է նպաստի ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանը: Իսկ ավելի կոնկրետ, աղքատության հաղթահարմանը: Այս առումով, *ընտանեկան նպաստների դրամական չափը կարիք ունի իրատեսական վերահաշվարկման, որը թույլ կտա իրականում ընտանիքին հոգալու գոնե սննդի նվազագույնն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերը*: Խնդիրն այն է, որ այս քաղաքականության հիմքում ընկած պարենային զամբյուղը, որը ներկայումս գնահատված է 24,169 դրամ, չի կարող բավարար լինել մեկ անձի սննդի նվազագույն ծախսերը հոգալուն: Ակնհայտ է, որ այդ գումարով մարդն ամսվա ընթացքում կլինի անընդհատ թերսնված վիճակում և տևական ժամանակ այդ գումարի հույսին մնալու դեպքում, կենթարկվի ֆիզիկական հյուծման, կկանգնի առողջապահական լուրջ խնդիրների ու վերջին հաշվով կյանքի որակի ու տևողության կրճատման վտանգի առջև: Պարենային շեմի և աղքատության վերին ու ստորին շեմերի նման խեղաթյուրումը գործում

է ի վնաս աղքատների և աղքատների իրական հոգսերի հանդեպ պետական քաղաքականության ձևական բնույթի խոսուն վկայությունն է: Նման խնդրի լուծման համար անհրաժեշտ է պարենային շեմի գոնե կրկնակի բարձրացում, հետևաբար նպաստների բարձրացում: ՀԶԾ-ով նախատեսված պարենային զամբյուղի աճը 2025-ին նախատեսվում է բարձրացնել մինչև 32118 դրամ (ՀԶԾ, 115): Այս առումով, ակնհայտ է դառնում, որ ընտանեկան նպաստների ոլորտում պլանավորվող քաղաքականությունը դրամական օժանդակության առումով չի կարողանալու ծառայել ընտանիքի կենսամակարդակի բարելավման և աղքատության հաղթահարման հայտարարված նպատակին, քանի որ չունի իրատեսական ֆինանսական պլանավորում: Այս պարագայում, երբ գործուն ֆինանսական օժանդակության աճ ակնկալվող քաղաքականության մեջ չի նախատեսվում, սոցիալական աջակցության քաղաքականությունում ավելի մեծ կարևորություն պետք է տալ ինտեգրված համալիր ծառայությունների փաթեթի մնացած բաղադրիչների կենսագործման խնդրին: Դա հատկապես ակնհայտ է դառնում նպաստառու ընտանիքների աղքատության խորացումն ու վերարտադրությունը պայմանավորող այլ կարիքները հաշվի առնելու դեպքում:

Նպաստառու ընտանիքների հետ հարցազրույցները և ընտանիքներում իրականացված ներգրաված դիտարկումները թույլ են տալիս ասել, որ այս ընտանիքների հիմնական մասում առկա են առողջապահական չլուծված լուրջ խնդիրներ: Ընդհանրապես, հիվանդությունները և քրոնիկ անառողջ վիճակում գտնվելը աղքատ ընտանիքների համար Հայաստանում դարձել է խիստ բնութագրական երևույթ: Չնայած, շատ դեպքերում, նպաստառու ընտանիքներին օրենքով հասնում է անվճար առողջապահական ծառայություններ, սակայն ոչ միշտ է, որ անվճար առողջապահական ծառայությունից օգտվելու հնարավորությունը թույլ է տալիս լիովին ու որակյալ կարգով լուծելու առողջապահական պրոբլեմը: Դրա պատճառները մի քանիսն են: Նախ, անվճարունակ, այսինքն ստվերային վճարումներ անելու անընդունակ հիվանդների կամ ժողովրդական արտահայտությամբ «ձրի հիվանդների» հանդեպ հիվանդանոցներում բուժանձնակազմի ոչ բարյացակամ վերաբերմունքն է: *«Էն միտքը, որ էնտեղ քեզ որպես մարդ չեն նայում, հետ ա պահում տեղեկանք վերցնելուց ու հիվանդանոց գնալուց»*, նշվում է հարզացրույցներից մեկում: Այս երևույթը բավական ընդհանրական ու բնութագրական է աղքատների հանդեպ առողջապահական հիմնարկներում ցուցաբերվող վերաբերմունքին: Սա շատ խորքային հիմնախնդիր է, որին լուծում չգտնելու դեպքում կասկածի տակ կարող է դրվել սոցիալական աջակցության նոր օրենքով ապահովված վերականգողական օգնության տրամադրման իրատեսականությունը: Այս խնդրի լուծումը համալիր մոտեցում է պահանջում: Նախ, անհրաժեշտ է աղքատ հիվանդներին բուժող բժիշկներին ապահովել մատուցվող բժշկական ծառայության դիմաց իրատեսական վարձատրություն, ինչը կմեծացնի բժշկի ֆինանսական մոտիվացիան: Երկրորդ, կարևոր դերակատարում պետք է հատկացնել սոցիալական դեպք վարող սոցաշխատողին, ով պետք է նախ, աշխատի ձևավորել ու հետևել բուժանձնակազմի հարգալից ու հոգատար վերաբերմունքի ցուցաբերմանը, երկրորդ, հետևողական ու պահանջատեր լինի բժիշկների կողմից մատուցվող առողջապահական ծառայության որակի ու լիարժեքության հանդեպ: Պարզ ասած, տիրություն անի հիվանդին, մինչև նա կստանա առողջության վերականգնումն ապահովող լիարժեք բուժում:

Մեկ այլ պատճառ էլ կապված է առողջապահական համակարգում տարածված ներկայիս պրակտիկաների հետ: Հիվանդանոցները ոչ միշտ է, որ ունեն անհրաժեշտ դեղամիջոցները: Հաճախ հիվանդներն իրենք պետք է ձեռք բերեն դեղամիջոցները, որոնք գնելու համար ֆինանսական միջոցներ ոչ միշտ է, որ հնարավոր է լինում հայթայթել:

Մեկ այլ պատճառ էլ կապված է աղքատներին ծառայություններ մատուցող բուժհաստատությունների որակական անբավարար վիճակի հետ: Խնդիրն հատկապես սուր է մարզային բնակավայրերում, որտեղ բժշկության որակը գնալով անկում է ապրում և լուրջ հիվանդությունների դեպքում անհրաժեշտ է լինում գնալ Երևան: Սա նույնպես ծախսերի հետ է կապված, ինչի պատճառով աղքատ ընտանիքների անդամները հաճախ պարզապես հրաժարվում են բժկի դիմելուց մինչև չի զգացվում դրա ծայրահեղ անհրաժեշտությունը:

Հարկ է նկատել, որ անհավասարություն ծնող հիմնական գործոնը վերաբերում է առողջապահության ոլորտում ունևոր և աղքատ խավերի միջև դրվող խտրականության խորը արմատավորվածությանը, ինչը ընդանուր առմամբ ձևավորել է մտայնություն, որ աղքատները արժանի չեն որակյալ ու լիարժեք առողջապահական ծառայությունների, որ հիվանդ լինելը ու ոչ որակյալ կյանքը աղքատությանը ուղեկցող բնական երևույթ է համարվում, իսկ նրան մատուցվող բժշկական ծառայությունը կարող է լինել ոչ որակյալ ու ոչ լիարժեք:

Աղքատությունը հաղթահարելու հեռանկարի տեսանկյունից գլխավոր խնդիրներից մեկը վերաբերում է աղքատ ընտանիքների երեխաների կրթությանը: Սա առանցքային նշանակություն ունի հատկապես աղքատ ընտանիքների երեխաների ունակությունների բացահայտման ու զարգացման տեսանկյունից: Ըստ ՄԱԿ-ի 2016 թ. զեկույցի 2015 թ. տարրական դպրոցից դուրս մնացած երեխաների թիվը Հայաստանում կազմում է 9.8%: Աղքատ ընտանիքների երեխաները սովորաբար սովորում են այսպես կոչված «վատ» դպրոցներում: Մարզերում առկա են նաև այսպես կոչված «լավ» և «վատ» դասարաններ: Սովորաբար, անապահով ընտանիքների երեխաները հայտնվում են «վատ» դասարաններում: «Վատ» դասարաններ են համարվում հիմնականում ոչ բարեկեցիկ, կամ անվճարունակ համարվող ընտանքիների երեխաներից կոմպլեկտավորված դասարանները, որոնց դասավանդում են ավելի թույլ համարվող ուսուցիչները, դասարանը ավելի վատ է կահավորված, ուսուցիչը ավելի քիչ ջանք ու եռանդ է հատկացնում երեխաների հետ աշխատանքին, ավելի կոպիտ է վարվում նրանց հետ, մատերի արանքով նայում առաջադիմության խնդիրներին: Այս դասարաններում կուտակվում են հիմնականում ցածր առաջադիմություն ունեցող, վատ վարքի տեր երեխաները որտեղ կրթական միջավայրնն ու մթնոլորտը շատ ավելի անբարենպաստ են երեխայի համար, քան՝ այսպես կոչված «լավ դասարաններում»:

Մեկ այլ պրոբլեմ էլ կապված է երեխայի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող լրացուցիչ կրթության անմատչելիությանը: Խոսքը վերաբերվում է տարբեր խմբակների հաճախելու կարիքի բավարարմանը, որոնք հիմնականում վճարովի են և աղքատների համար դժվարամատչելի: Այս խմբակների հաճախումը կարևոր դեր է կատարում վաղ տարիքում երեխայի ստեղծագործական ունակությունների բացահայտման համար և անձի, ընտանիքի ու հասարակական մակարդակներում ձևավորում է աղքատության հաղթահարման համար կարևոր մարդկային ներուժ:

Անապահով խավերի երեխաների ուսման հետ կապված խնդիրներ կան նաև բարձրագույն կրթության ոլորտում: Սովորաբար, աղքատ ընտանիքների երեխաները անբավարար նյութական միջոցների պատճառով ոչ միայն չեն կարողանում բավարար կերպով նախապատրաստվել ընդունելության քննություններին, այլև՝ համարելով դա իր համար անմատչելի մի բան, նույնիսկ բուհում սովորելու նպատակ դնել:

Բացի հանրակրթական ու բարձրագույն կրթությունը աղքատների համար կարևոր խնդիր է նաև լրացուցիչ կամ մեծահասակների համար շարունակական կրթություն ստանալու խնդիրը: Խոսքը վերաբերում է տարբեր տեսակի մասնագիտական կամ օտար լեզվի վճարովի կուրսերի խնդրին, որը հնարավորություն է տալիս ձեռք բերել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող նոր մասնագիտություն:

Աղքատ ընտանիքների համար աղքատությունը հաղթահարելուն ուղղված կարևոր կարիքներից է հոգեբանական օժանդակությունը: Երկարատև աղքատությունը հյուծում է մարդկանց հոգեբանորեն, ինչը դառնում է տևական կամ մշտական աղքատության պատճառ:

Աղքատ ընտանիքների համար կարևոր կարիքներից է իրազեկվածության պակասը: Կարելի է ասել, որ աղքատ ընտանիքներին բնորոշ է նաև տեղեկատվական աղքատությունը: Աղքատության մեջ հայտնվելու պատճառով մարդիկ կորցրել են նաև տեղեկատվության հանդեպ մատչելիությունը և տեղեկություն ձեռք բերելու հմտությունները: Ուստի, այդ պատճառով հաճախ են լինում աղքատ ընտանիքներ, ովքեր չեն կարողանում օգտվել իրենց համար սահմանված օգնություններից իրազեկվածության ու անհրաժեշտ խորհրդատվության անբավարարության կամ անմատչելիության պատճառով:

Վերև թվարկված հիմնախնդիրների լուծման հնարավորություն նախատեսվում է ՀՀ սոցիալական աջակցության նոր օրենքով: Գլխավոր խնդիրը ոչ այնքան օրենքի, որքան դրա հաջող գործարկումն ապահովելու ու *սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման հաջող պրակտիկաների ձևավորման մեջ է*: Դրա հաջող ու արդյունավետ իրականացման համար կարևոր է արմատականորեն փոփոխել նախկին պրակտիկաները: Դրանց զուգահեռ անհրաժեշտ է ազդել նաև աղքատության մշակույթը խորացնող գործող դիսկուրսների վրա: Մասնավորապես, պետական պաշտոնյաների միջավայրում էթիկական կարևոր խնդիր պետք է համարվի աղքատների հասցեին անհավասարության ու խտրականության խոսք կամ քարոզ հանրայնորեն հնչեցնելու սահմանափակումը: ԶԼՄ-ների ու սոցիալական ցանցերի օգտագործման միջոցով անհրաժեշտ է նաև ձևավորել նման երևույթները դատապարտող հասարակական կարծիքի ազդեցիկ միջավայր: *Պետական պաշտոնյաներն ի պաշտոնե կոչված են իրենց գործունեությունն ուղղելու բնակչության բոլոր խավերի բարեկեցության ու իրավունքների պաշտպանությանը, մարդկանց զարգացման ու գործունեության համար հավասար հնարավորությունների ձևավորմանը: Այս մտայնությունը առաջին հերթին անհրաժեշտ է բնութագրական դարձնել սոցիալական աջակցության քաղաքականությունը իրացնող պետական մարմինների համար:*

Սոցիալական աջակցության քաղաքականության կարևոր խնդիրներից է սոցիալական ոլորտի պետական աշխատակիցների մոտ ընդլայնել*սոցիալական աջակցություն* հասկացության սահմանների ընկալումը, դրա տակ նկատի ունենալով ոչ միայն ֆինանսական ու նյութական բնույթի աջակցության ձևերը, այլև՝ մարդուն աղքատության վիճակից դուրս գալուն ուղղված առողջապահական, կրթական,

հոգեբանական, սոցիալ-մշակութային և վերականգնողական այլ բնույթի համալիր ծառայությունների մատուցումը: Առանցքային խնդիր է նաև սոցիալական ծառայողների կողմից նպաստառուների հանդեպ անբարեհաճ վերաբերմունքի նախկին արատավոր պրակտիկաների իսպառ վերացումը: Ցավոք նախկին համակարգում գործել է վարչահրամայական այնպիսի մեթոդներ, որի հետևանքում անապահովները սոցիալական ծառայությունների կենտրոնների աշխատակիցների մեջ գտել են ոչ թե իրենց աջակիցներին, այլ՝ իրենց հանդեպ անբարյացակամ տրամադրված կամակատարների. «*Էդ տեսուչների մեջ էնքան չարություն կա: Էդ էլ պիտի մաքրվի: Իրանք կարան ազդեն մարդու վրա: Բոլորը չէ, որ իրենց իրավունքները գիտեն ու մարդու վրա էնպես կարան գոռան, որ մարդը խեղճանա*», նշվում է նպաստառուների հետ իրականացված հարցազրույցներից մեկում:

Կարևոր է նաև հենց աղքատների միջավայրում տարածված այնպիսի դիսկուրսների հաղթահարումը, որոնք նպաստում են աղքատության մշակույթի խորացմանը: Խոսքը մասնավորապես վերաբերում է այնպիսի տարածված մտայնությունների փոփոխմանը, ինչպիսիք են աղքատության իրական վիճակը քողարկող, այն որպես միջին կամ նորմալ ներկայացնող, աղքատություն ու անհավասարություն ձևավորող հարուստ խավերի անօրինական ու արատավոր պրակտիկաների նորմալացմանը, աղքատությունը ամոթ համարող, աղքատության մեջ աղքատներին մեղադրող տարածված խոսույթները:

Մեկ այլ խնդիր է նաև աղքատների մեջ տարածված իռացիոնալ պրակտիկաների հաղթահարումը: Խոսքը վերաբերում է հատկապես աղքատությունը ամոթ համարելուց և այն թաքցնելու նպատակով բարեկեցիկ երևալուն ուղղված այնպիսի ծախսերին ու գնումներին, որոնց համար ընտանիքը ստիպված է լինում հայտնվել պարտքերի կամ վարկերի տակ:

Ըստ հետազոտական տվյալների *աղքատների միջավայրում տարածված կարիքներից է նաև ընտանեկան բյուջեի ծրագրավորման անընդունակությունը*: Սովորաբար այն ընտանիքները, ովքեր կարողանում են ծրագրավորել իրենց ընտանեկան բյուջեն ամսեկան ու երկարատև կտրվածքներով, ավելի մեծ հնարավորություն են ստեղծում խուսափել ընտանիքի մակարդակում աղքատության խորացման ու վերարտադրման վտանգից, քան նրանք ովքեր չունեն այդ հմտությունը: Ըստ որոշ կարծիքների, անփույթ ու թափթփված ծախսերի իրականացումը, կարճաժամկետ մտածողությունը և պարզագույն հաշվարկներ անելու ու հեռանկարային պլանավորման ունակության բացակայությունը աղքատության մշակույթի բաղադրիչ է և աղքատությունը քրոնիկական դարձնող բացասական գործոն: Աղքատ ընտանիքներում բյուջեի հաշվարկման ու ծրագրավորման կարողության զարգացումը կարող է զգալիորեն բարելավվել այդ ընտանիքների վիճակը և նպաստավոր գործոն դառնալ աղքատության հաղթահարման համար:

Աղքատության մշակույթի մեկ այլ խիստ բացասական հատկանիշ է աղքատության վիճակի հաղթահարմանն ուղղված նպատակի ու քայլերի ծրագրավորման բացակայությունը: Դեպք վարող սոցիալական աշխատողի կարևոր անելիքներից մեկը կարելի է համարել ընտանիքի հետ նրա աղքատության հաղթարման ծրագրի մշակումն ու դրան ուղղված քայլերի իրականացումը:

Աղքատության մշակույթի ձևավորման ու վերարտադրությանը նպաստող գործոններից բացասական առումով ծանր դերակատարում ունեցողներից է նաև աղքատ

ընտանիքների մեկուսացման և ինքնամեկուսացման պրակտիկաները: Աղքատները, ինչպես նկարագրվեց վերևում, իրենց կարգավիճակից ունեցած ամոթի պատճառով, հաճախ նաև շրջապատի նյութական շահադիտական մոտեցումների հետևանքում հայտնվում են հասարակության այլ խավերից մեկուսացվածության մեջ: Այս առումով, կարևոր է որ շահառու ընտանիքների հետ աշխատող սոցաշխատողները նպաստեն այդ մեկուսացվածության հաղթահարմանը: Խոսքը վերաբերում է մասնավորապես համայնքային, քաղաքացիական և մշակութային տարբեր ծրագրեր իրականացնող հասարակական և մշակութային կազմակերպությունների և *համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների* միջև համագործակցության պրակտիկաների ձևավորմանը:

Կարևոր է նկատել, որ աղքատության մշակույթի խորացման պատճառներից մեկը լայն առումով մշակույթից ու մշակութային միջոցառումներին աղքատների մասնակցության մեկուսացումն է: Թե ինչպես կարող է ազդել մշակութային միջոցառմանը մասնակցությունը աղքատության հաղթահարման վրա խոսուն օրինակ է Գյումրիից գրանցված հետևյալ դեպքը: Սոցիալական ծայրահեղ ծանր վիճակում հայտնված ընտանիքում մեծացող երեխայի վրա ցնցող տպավորություն է թողել Գյումրիի տնակային թաղամասում անցած տարի Տիգրան Համասյանի կազմակերպած համերգը: Համերգին մասնակցությունից հետո նա որոշել է երաժիշտ դառնալ: Բարեկամների օգնությամբ նա կարողացել է իրագործել իր ցանկությունը և ներկայումս հաճախում է երաժշտական դպրոց: Մեկուսացումից դուրս գալը և երաժշտական դպրոց հաճախելը երեխայի մոտ մեծացրել է սովորելու ու իր կարողությունները զարգացնելու մոտիվացիան, ինչի արդյունքում հաջողվել է նաև միջոցներ հայթայթել օտար լեզվի խմբակ հաճախելու համար: Երեխայի մեկուսացումից դուրս գալը որոշակի խթան է հանդիսացել նաև արտագնա աշխատանքի մեկնած ամուսնու կողմից լքված և սոցիալհոգեբանական որոշակի պրոբլեմների մեջ հայտնված երիտասարդ մոր համար, ով որոշել է հաճախել նպաստառու կանանց համար կազմակերպված շարունակական կրթության դասընթացներին, նոր մասնագիտություն ձեռք բերելու և իր աղքատ վիճակը ինքնուրույն հաղթահարելու համար: Այս առումով, հենվելով նոր օրենքի ընձեռած փոփոխությունների վրա, անհրաժեշտ է ձևավորել աղքատ ընտանիքների մշակութային մեկուսացվածությունը հաղթահարելուն ուղղված պրակտիկաներ:

2.4 Սոցիալական և մշակութային կապիտալների ձևավորման ու զարգացման դժվարությունները անապահով ընտանիքներում և դրանց հաղթահարմանն ուղղված հնարավոր լուծումները

Հետազոտության տվյալները թույլ են տալիս հանգել այն եզրակացության, որ աղքատությունը ձևավորվում է ոչ միայն տնտեսական կապիտալի, այլև՝ առաջին հերթին մշակութային ու սոցիալական կապիտալների անբավարարության հետևանքում: Մշակութային կապիտալ ասելով, այստեղ նկատի ունենք մարդու կողմից իր կյանքի ընթացքում մարմնավորած, այսինքն, յուրացրած հմտություններն ու կարողությունները և այդ հմտություններն ու կարողությունները առարկայացնելու ու փոխանակելու ունակությունը (Bourdieu 1986, 242): Այլ կերպ ասած, մշակութային կապիտալը դա

դաստիարակության ու կրթության արդյունքում մարդու մեջ ձևավորված ունակություններն են, որոնց շնորհիվ նա ստեղծում է հասարակական պահանջարկ ունեցող բարիքներ: Ծնորհիվ իր մշակութային և սոցիալական կապիտալների մարդը մտնում է այլոց հետ փոխանակային հարաբերությունների մեջ և ձևավորում հասարակական ստատուս ու կապեր, ինչպես նաև հնարավորություն ստանում իր առաջարկած մշակութային կապիտալի դիմաց ստանալ նյութական փոխհատուցում: Այսինքն, մշակութային կապիտալը վեր է ածում սոցիալական ու տնտեսական կապիտալների: Այս առումով հարկ է նկատել, որ *մշակութային կապիտալը առանցքային նշանակություն է ստանում աղքատության հաղթահարման համար և դրա ձևավորումը աղքատ ընտանիքներում մեծացող երեխաների մոտ ընտանիքի աղքատության հաղթահարման երաշխիքներից մեկն է*:

Այն ընտանիքները, ովքեր հայտնվել են աղքատության փակ շրջանում և թվում է թե անհուսորեն դատապարտված են աղքատության, առաջին հերթին աչքի են ընկնում հենց մշակութային կապիտալի որակների շատ ցածր աստիճանով:

Ընտանիքի մակարդակում աղքատության վերարտադրության վրա բացասաբար ազդող գործոններից է աղքատ ընտանիքներում ծնողների մշակութային և սոցիալական կապիտալի ցածր որակները: Ընդհանրապես, գիտականորեն հիմնավորված է, որ ծնողների մշակութային կապիտալը առանցքային դեր ունի երեխաների մշակութային կապիտալի որակների ձևավորման վրա ((Bourdieu 1986, 242-243): Աղքատ ընտանիքներում, որպես կանոն ծնողների մշակութային ու սոցիալական կապիտալը ցածր է: Դրա հետևանքում, նման ընտանիքներում երեխաները չեն ստանում իրենց ընդհանուր զարգացման համար անհրաժեշտ բավարար մշակութային կապիտալ, հետ են ընկնում մյուսներից ու դառնում ավելի թույլ մրցունակ: Այս երեխաները սովորաբար մեկուսացված են մեծանում նաև իրազեկ և մշակութային առումով միջինից բարձր ցենզ հասարակական միջավայրերից: Այդ պատճառով նաև չեն ստանում ինֆորմալ եղանակով ձեռք բերվող արժեքավոր գիտելիքներ և տեղեկատվություն[2]:

Այս առումով, կարևոր է սոցիալական աջակցության քաղաքականության մեջ ներառել այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն աղքատ ընտանիքների երեխաների մշակութային կապիտալի զարգացմանը և նրա ընդհանուր զարգացվածության աստիճանը հասարակության միջին մշակութային զարգացվածության մակարդակին հասցնելուն: Որպես նման մեխանիզմ կարող են ծառայել տարբեր վճարովի խմբակներ աղքատ ընտանիքների երեխաների հաճախումն ապահովելը: ***Կարևոր է, որ ոչ թե աղքատ երեխաների համար ստեղծվեն տարբեր խմբակներ, այլ որ ստեղծվի մի մեխանիզմ, ինչը թույլ կտա աղքատ ընտանիքների երեխաներին հաճախել այդ խմբակները հասարակության մյուս սոցիալական խավերը ներկայացնող ընտանիքների երեխաների հետ միասին***: Դա կարևոր է, քանի որ թույլ կտա ոչ միայն ուսուցման եղանակով բարձրացնել աղքատ ընտանիքների երեխաների մշակութային կապիտալը, այլև

[2] Ինֆորմալ կրթությունը համարվում է առօրյա հաղորդակցության արդյունքում ձառք բերված գիտելիքներն ու հմտությունները: Այն նույնական չէ ոչ ֆորմալ կրթությանը, որի տակ նկատի է առնվում ֆորմալ կրթական հաստատություններից դուրս, սակայն ուսուցման եղանակով իրականացվող կրթությունը:

հաղորդակցման միջոցով ինտեգրվել հասարակական այլ խավեր ներկայացնող սոցիալմշակութային միջավայրերին և մանկական տարիքից արդեն ունենալ նաև սոցիալական կապիտալի աճ:

Եզրակացություններ

Անցած ժամանակաշրջանում Հայաստանում ձևավորված ու խորացած աղքատությունը վերջին տասնամյակում ձեռք է բերել վերարտադրվող բնույթ ինչպես հասարակական, այնպես էլ ընտանեկան մակարդակներում: Աղքատության վերարտադրության վրա ազդող գործոն է նաև սոցիալապես անապահով խավերում ձևավորված աղքատության մշակույթը: Աղքատության վրա բացասաբար ազդող գործոններից են նաև աղքատության ու անհավասարության դիսկուրսները, որոնք խտրական վերաբերմունք են ձևավորել աղքատ խավերի հանդեպ: Դրանք նաև ձևավորել են այնպիսի հասարակական կարծիք, համաձայն որի աղքատներն իրենք են մեղավոր իրենց վիճակի համար, ինչը հարուստների շահերը սպասարկող իշխանությունների վրայից աղքատության հաղթահարման պատասխանատվությունը գցում է հենց իրենց աղքատների ուսերին: Այս մոտեցման հետևանքում, տարիներ շարունակ սոցիալական աջակցության քաղաքականությունը իրականացրել է ընդամենը աղքատների գոյատևման խնդիրներին խիստ մասնակիորեն աջակցելու դերակատարում, առանց որևէ լուրջ ազդեցություն թողնելու աղքատության հաղթահարման հիմնախնդրի լուծման գործում:

Թավշյա հեղափոխությունից հետո ստեղծվել է մի նոր իրավիճակ, քանի որ փոփոխված նոր իշխանությունները պատրաստակամություն են հայտնել սպասարկելու հասարակության բոլոր խավերի, այդ թվում և աղքատների շահերը: Հայաստանում առկա է այս խնդրի լուծման համար նպաստավոր ծրագրային և օրենսդրական հիմքեր և անհրաժեշտ քաղաքական կամքի ու պրակտիկաների ներդրման պայմաններում դրանք կարող են դրական արդյունքներ տալ:

Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը՝ ՀԶԾ-ն առաջադրում է ՀՀ-ում իրականացվող սոցիալական աջակցության քաղաքականությունը նպատակաուղղել աղքատության հաղթահարմանը և աղքատ ընտանիքների համար զարգացման ու աղքատությունից դուրս գալու խնդրի լուծմանը: 2015 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ Սոցիալական աջակցության օրենքը արտացոլում է ՀԶԾ-ը նպատակադրումները և էական փոփոխություններ է մտցնում սոցիալական աջակցության քաղաքականության օրենսդրական հիմքի մեջ: Այդ փոփոխությունները թույլ են տալիս նախկինում սոցիալական աջակցության կարիք ունեցողներին ցուցաբերվող դրամական բաղադրիչի վրա հենվող քաղաքականության մեջ ներառելու համալիր փաթեթ, որը կնպաստի ընտանիքի անդամների առողջապահական, կրթական ու սոցիալական պահանջմունքների բավարարմանը: Այսինքն, նոր օրենսդրությունը թույլ է տալիս զգալիորեն արդիականացնել սոցիալական աջակցության քաղաքականությունը, առաջարկելով այն կառուցել ըստ մարդկային զարգացման գաղափարի վրա հիմնված սոցիալական արդարության հայեցակարգի:

Սկսած 2017 թ. հունվարի 1-ից, արդեն ավելի քան մեկ տարի է, որ փոխվել է նաև ընտանեկան նպաստների քաղաքականությունը: Դրամական ձևով ընտանեկան նպաստի տրամադրման քաղաքականությունից անցում է կատարվել ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրին: Սա նշանակում է, որ սոցիալական աջակցության ոլորտում ընտանիքի գոյատևման խնդիրների պարզ աջակցությունից նախատեսվում է անցնել ընտանիքի կենսամակարդակի բարձրացման ու մարդկային զարգացման խնդիրների լուծմանը:

Սոցիալական աջակցության քաղաքականության պրակտիկաները և նոր դիսկուրսի ձևավորման անհրաժեշտությունը

Չնայած օրենսդրական ոլորտում իրականացված փոփոխություններին, այն քաղաքականության մակարդակում դեռևս լիարժեք կերպով չի գործում և դեռ չի ձևավորել համարժեք ու արդյունավետ պրակտիկաներ: Անհրաժեշտ է ներդնել նոր պրակտիկաներ ինչպես սոցիալական աջակցության ցուցաբերման ոլորտում, այնպես էլ մարդկային զարգացման միջոցով աղքատության հաղթահարման հետ կապված այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունն ու կրթությունը:

Օրենսդրական և քաղաքականության ծրագրավորման ոլորտներում իրականացված դրական փոփոխությունները ցավոք դեռևս չեն փոխել աղքատների հանդեպ իշխող և ունևոր վերնախավերի կողմից ձևավորված ու տարածված անհավասարության ու խտրականության դիսկուրսները: Անհրաժեշտ է ձևավորել նոր պրակտիկաներ ու դիսկուրսներ, որոնք կհակակշռեն իշխանական տարածված դիսկուրսը: Դրան կարող է նպաստել նաև Հայաստանում իրականացված Թավշյա հեղափոխությունը և ձևավորված նոր կառավարությունը: Դրանում զգալի դերակատարում պետք է ստանձնեն ՀՀ ԱԺ-ն, մասնավորապես ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, ՀՀ աշխատանքի ու սոցիալական ապահովության, ՀՀ կրթության ու գիտության, ՀՀ մշակույթի, ինչպես նաև տնտեսական ոլորտի նախարարությունները: Առանձնահատուկ դերակատարում կարող են ունենալ աղքատների հանդեպ խտրական վերաբերմունքի ու անհավասարության դիսկուրսների հաղթահարմանը նպատակաուղղված սոցիալական տեսահոլովակների ձևավորումը և առցանց հարթակների միջոցով դրանց տարածումը:

Կարևոր է նաև աղքատությունը ամոթ համարող և այն թաքցնելու պրակտիկաների հաղթահարումը սեփական աղքատությունից չամաչող, սակայն այն հաղթահարելու հաջող փորձառությունների ու դրական նախադեպերի քարոզչության միջոցով: Անհրաժեշտություն կա հիմնովին բարենորոգել սոցիալական աջակցության ոլորտում նախկինում գործող պրակտիկաները և աղքատների հանդեպ դրանում առկա անհավասարության, խտրականության ու անհարգալիրության երևույթները փոխարինել մարդու արժևորման, հավասարության ու հարգալիրության մոտեցումներով՝ անկախ մարդու սոցիալական կարգավիճակից:

Այսօրվա Հայաստանում անհրաժեշտություն կա քաղաքականության իրագործման ոլորտը համարժեքացնել քաղաքականության օրենսդրական ու ծրագրային նպատակադրումներին: Այս առումով, կարևոր է քաղաքականության իրականացման և աղքատության կրճատման արդյունքների պոպուլիստական չափանիշներից ու քաղաքականությունից անցնել իրատեսական չափանիշների ու միջոցառումների: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է աղքատության վերին, ստորին ու պարենային շեմերի վերանայմանը և կյանքի հետ

համահունչ, իրատեսական շեմերի սահմանմանը: Այդ դեպքում, հնարավոր կլինի վիճակագրորեն ֆիքսվող աղքատության կրճատումը իրականացնել ոչ միայն շինծու ցուցանիշների մակարդակում, այլև՝ իրականորեն:

Աղքատների առողջապահական կարիքների բավարարման քաղաքականությունների անհրաժեշտությունը

Սոցիալական աջակցության նոր օրենքով նախատեսված վերականգնողական օգնության ցուցաբերման արդյունավետությունը ապահովելու համար արմատական փոփոխություններ են անհրաժեշտ իրականացնել առողջապահական ոլորտում: Հաճախ աղքատները չեն դիտվում որպես որակյալ առողջապահական ծառայություններ ստանալու արժանի մարդիկ, ինչի հետևանքում նրանց մատուցվող առողջապահական ծառայությունը բավարար որակի չի լինում: Դրա հետևանքում, առողջապահական անորակ ծառայությունների շարունակական մատուցման և աղքատների հանդեպ առողջապահական որոլտում առկա արհամարական վերաբերմունքի պատճառով նկատվում է աղքատ մարդկանց կյանքի որակի ու տևողության վրա ազդող հիվանդությունների խորացում, ինչը ըստ այս վերլուծության հիմքում ընկած հետազոտական տվյալների աղքատության մշակույթ ձևավորող գործոն է:
Առողջապահական կարիքների անորակ սպասարկումը լրջագույն խոչընդոտ է աղքատ մարդկանց մարդկային զարգացման տեսանկյունից: Հետազոտված դեպքերը, ինչպես նաև փորձագիտական հարցազրույցների տվյալները փաստում են, որ անձի ու ընտանիքի մակարդակում աղքատության վերարտադրությունը պայմանավորող հիմնարար գործոններից մեկը առողջապահական խնդիրներն են և աղքատների համար որակյալ առողջապահական ծառայություններ ստանալու անհնարինությունը:

Աղքատների կրթական կարիքների բավարարման քաղաքականությունների անհրաժեշտությունը

Կրթությունը ռազմավարական նշանակություն ունի անձի ու ընտանիքի աղքատության հաղթահարման համար: Աղքատ ընտանիքներում երեխաները անհրաժեշտ պայմանների անբավարարության պատճառով հաճախ չեն կարողանում լավ սովորել դպրոցում ու հետագայում նաև շարունակել կրթությունը: Առկա են դրա վրա ազդող մի շարք գործոններ: Նախ, ծնողների մշակութային ու սոցիալական կապիտալի ցածր որակները բացասաբար են ազդում երեխայի ընդհանուր զարգացման մակարդակի վրա: Մանկուց երեխայի մոտ ձևավորվում է ցածր գեղարվեստական, գեղագիտական, տեղեկատվական, ինտելեկտուալ ու էմոցիոնալ կարողություններ: Դրանք երեխայի մոտ սահմանափակում են ապագայի հետ կապված ընտրության հնարավորությունները, լավ կրթություն ստանալու, ապագայում որակավորված մասնագիտական գործունեություն իրականացնելու ձգտումը: Երկրորդ լրջագույն խոչընդոտը կապված է կրթական համակարգի հետ, որը անհավասար պայմաններ է ձևավորել ունևոր, միջին և դրանից ցածր խավերի երեխաների համար: Որպես կանոն, միջինից ցածր սոցիալական խավերի երեխաները սովորում են արվարձանների կամ մարզային ու գյուղական դպրոցներում, որտեղ կրթության որակը զգալիորեն զիջում է այսպես կոչված «լավ» դպրոցների որակին: Բարեբախտաբար, ներկայումս իրականացվում են մի շարք ոչ ֆորմալ կրթական ծրագրեր, որոնք հատուկ կարևորություն են տալիս հենց մարզերում կրթության կազմակերպմանը: Այս առումով, նշանակալի է «Արմաթ» ծրագրի

իրագործումը, որը թիրախավորել է մարզային քաղաքների ու գյուղական դպրոցները ստեղծելով դրանցում ինժեներական դասարաններ, որտեղ երեխաներին ուսուցանվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գիտելիքներ ու հմտություններ:
Աղքատության հաղթահարման տեսանկյունից որակյալ կրթություն ստանալու կարևորությունը հիմնարար է: Քանի որ այդ ընտանիքներից շատերում ծնողների ցածր մշակութային ու սոցիալական կապիտալը թույլ չի տալիս անհրաժեշտ ուշադրություն դարձնել երեխաների կրթությանը, երեխայի դաստիարակության գործընթացում բավականաչափ կարևորություն չի տրվում սովորելու ու գիտելիք ձեռք բերելու հանդեպ մոտիվացիաների ձևավորմանը, ապա մեծանում է աղքատ ընտանիքների հետ դեպք վարող սոցիալական աշխատողների վրա հատուկ դերակատարում դնելու անհրաժեշտությունը:

Աղքատների մեկուսացման պրակտիկաները և դրանց հաղթահարման անհրաժեշտությունը

Աղքատությունը վերարտադրող և աղքատության մշակույթ ձևավորող գործոններից է նաև աղքատների մեկուսացման պրակտիկաները: Հարկ է նկատել, որ դրանք գործում են երկուստեք՝ ինչպես ոչ աղքատների կողմից աղքատներին մեկուսացնելու, այնպես էլ աղքատների ինքնամեկուսացման ձևերով: Մեկուսացման հիմնախնդիրն առկա է ինչպես հասուն տարիքային խմբերի, այնպես էլ դպրոցահասակ ու երիտասարդ տարիքային խմբերում:
Այս առումով, կարևոր դերակատարում են իրականացնում հասուն տարիքային խմբերի համար կազմակերպվող շարունակական կրթության դասընթացները: Դրանց միջոցով, պատկերավոր ասած, մեկ կրակոցով երկու նապաստակ է սպանվում: Նախ, աղքատները ձեռք են բերում նոր մասնագիտություն, երկրորդ, հնավորություն են ստանում դուրս գալու սոցիալական մեկուսացված իրավիճակից և հաղորդակցություն ու կապեր հաստատելու նոր մարդկանց հետ:

Իրազեկվածություն, մասնակցություն և իրավագիտակցություն

Աղքատության հաղթահարման մեջ առանցքային է նաև իրազեկվածության ու տեղակատվական մեկուսացվածությունը հաղթահարելու խնդիրը: Այդ խնդրի լուծմանը զուգահեռ աղքատ անձանց ու ընտանիքների համար առանցքային նշանակություն ունի որակյալ խորհրդատվական ծառայությունների ապահովումը:
Իրավագիտակցության հիմնախնդիրը մեկ այլ լուրջ խոչընտոդ է աղքատների համար: Տևականորեն ճնշված, անտեսված ու արհամարված վիճակում ապրելը, թե իրենց և թե միջավայրի մոտ ձևավորել է նրանց իրավազուրկ լինելու մասին մտայնություն և այդ իրավազրկվածությունը բնական համարելու կարծրատիպ:
Մշակութային կապիտալը առանցքային նշանակություն ունի աղքատության հաղթահարման գործում: Աղքատ ընտանիքներում մեծացող երեխաների մշակութային ու սոցիալական կապիտալների ձևավորումը ընտանիքի աղքատության հաղթահարման հիմնարար երաշխիքներից մեկն է:

Առաջարկություններ

I. Աղքատների առողջապահական կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականությունների իրականացման նպատակով՝

- Արմատականորեն **բարեփոխել** աղքատներին տրամադրվող անվճար բուժօգնության մեխանիզմները:

- **Ներդնել** կյանքի որակի ու տևողության վրա դրականորեն ազդող որակյալ բժշկական ծառայությունների մեխանիզմներ:

- **Բարձրացնել** աղքատներին մատուցվող անվճար բժկական օգնության որակը և հավասարեցնել այն այլ սոցիալական խավերին որակյալ առողջապահական ծառայություն մատուցող հաստատությունների որակին:

- **Իրականացնել** աշխատանքներ հիվանդանոցներում աղքատների հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքի վերանայման ու փոփոխման ուղղությամբ:

- **Վերանայել** դեպք վարող սոցիալական աշխատողների կողմից բժիշկների հետ իրականացվող աշխատանքը:

II. *Աղքատների կրթական կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականությունների իրականացման նպատակով՝*

- Երևանի ծայրամասերի ու մարզային ավելի շատ դպրոցներում **ձևավորել** «Արմաթ» ինժեներական լաբարատորիաներ, որտեղ սովորելը կարող է դառնալ նպաստառու ընտանիքների երեխաների կրթության պարտադիր պայման և ինչը հետագայում կմեծացնի նրանց հնարավորությունը մասնագիտություն ձեռք բերելու ու աշխատաշուկայում բարձր վարձատրվող աշխատանք գտնելու համար:

- Երեխաների մոտ կրթվելու ու մասնագիտություն ձեռք բերելու մոտիվացիա առաջացնելու խթանման նպատակով **ներդնել** նպաստառու ընտանիքների երեխաների հետ աշխատանքի իրականացմանն ուղղված սոցաշխատողների գործառույթ:

III. Աղքատների մեկուսացումը հաղթահարելու և իրենց մասնակցությունը խթանելու նպատակով՝

- **Խթանել** ծրագրեր ուղղված՝ ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ մշակույթի նախարարության միջև համագործակցությանը՝ սոցիալապես անապահով խավերի մշակութային մեկուսացվածությունը հաղթահարելու և նրանց մշակութային միջոցառումներին մասակից դարձնելու նպատակով:

- **Մշակել** գաղափարներ ուղղված մարզերում քաղաքացիական թեմաներով ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների ու աղքատ ընտանիքների հետ սոցիալական դեպք վարող սոցաշխատողների միջև համագործակցության խթանմանը:

- Հասարակական կազմակերպություններին՝ իրենց միջոցառումների շահառուների ցանկում միշտ **նախատեսել** նպաստառու ընտանիքների անդամների մասնակցությունը և **հրավիրել** նրանց մասնակցելու տարբեր միջոցառումներին:

- **Ձևավորել**՝ սոցիալական ոլորտի ծրագրերի մշակմանը աղքատ խավերի և նրանց շահերը ներկայացնող ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմներ, ինչը թույլ կտա սոցիալական աջակցության քաղաքականությունը իրականացնել շահառուների կարիքների հաշվառման միջոցով:

- **Իրականացնել** աշխատանքներ ուղղված՝ աղքատների իրավազուրկ լինելու մասին մտայնության և այդ իրավազրկվածությունը բնական համարելու կարծրատիպերի հաղթահարմանը:

- **Ապահովել** իրավական խորհրդատվությունն ու ծառայությունների տրամադրումը աղքատության մշակույթի հաղթահարման և աղքատության իրավիճակից դուրս գալու միտումով:

Օգտագործված գրականություն

1. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր: Երևան, 2003:
2. Աղքատությունը պատկերը Հայաստանում 2008-2015 թթ., Երևան, 2016: Հասանելի է. http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf .
3. ***Գաբրիելյան Մ.,*** Աղքատության հաղթահարման հիմնախնդիրը գյուղական բնակավայրերում: Երևան, 2001.
4. ***Գալստյան Մ.,*** Սոցիալական անհավասարությունը, սոցիալական շարժունությունը և սոցիալական կոնֆլիկտը Հայաստանում: Երևան. 2000.
5. ***Թադևոսյան Ա.,*** Աղքատ և անապահով խավերի մարդկային զարգացման ուղղված հետնգնաժամային իրավիճակը և դրա հաղթահարման ուղիները Հայաստանում: Երևան, 2011:
6. ***Թադևոսյան Ա., Գաբրիելյան Մ.,*** Աղքատության և հասարակական շերտավորման պատկերը Հայաստանում: Երևան, 2003:
7. ***Թադևոսյան Ա.,*** Աղքատության հիմնախնդիրը պետականության զարգացման ու ամրապնդման դիտանկյունից: Երևան, 2003.
8. ***Թադևոսյան Ա.,*** Աղքատության հաղթահարման համակարգային հիմքերը Հայաստանում: Երևան, 2001.
9. ***Թադևոսյան Ա.,*** Արժեքային գործընթացներն ու միտումները Հայաստանում 1991-1998 թվականներին: Երևան, 2000.
10. ***Թադևոսյան Ա.,*** Գոյատևման ռազմավարությունը հասարակական համագործակցության համատեքստում: Երևան, 1999.
11. ***Խառատյան Հ.,*** Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում: Երևան. ՄԻԺԻ: 2000.
12. ***Խառատյան Հ.,*** Աղքատության միջավայրը Հայաստանում. Պատմություններ աղքատության մասին, գիրք 2: Երևան, 2007: էջ 467-525:
13. Կայուն զարգացման ռազմավարական ծրագիր: Երևան, 2007.
14. ***Հարությունյան Բ.,*** Աղքատության սահմանման հիմնախնդիրը: Երևան, 2002:
15. Հայաստանում աղքատության ցուցանիշի սուտը: Հասանելի է. https://sut.am/archives/1169
16. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Ազգային վիճակագրական զեկույց: Երևան, 2002:
17. Հայաստանի վիճակագրական տարեգիրք: Երևան, ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2018:
18. ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Երևան, 2014:
19. ՀՀ օրենքը սոցիալական աջակցության մասին, Երևան, 2014
20. ***Մանուկյան Վ.,*** Գնացքից թռչելու ժամանակն է. Հոդվածների ժողովածու***:*** Երևան, 2002.
21. ***Մարգարյան Ն.,*** Մարդու իրավունքները և աղքատության հաղթահարման քաղաքականությունը Հայաստանում, Երևան. ՄԻԺԻ: 2001. *Human Rights and Poverty Reduction Policy in Armenia*. Yerevan. IDHR press. (In Armenian).
22. ***Մարության Հ.,*** Փոփոխություններ, այո, կան, բայց ո՞ր ուղղությամբ. Պատմություններ աղքատության մասին, գիրք 2: Երևան, 2007, էջ 455-467:
23. ***Շագոյան Գ.,*** Օգնություն. Բարի կամեցողություն թե՞ պարտականություն, Պատմություններ աղքատության մասին: Գիրք 1: Երևան, 2001, էջ 350-370:
24. Պատմություններ աղքատության մասին (խմբ. Խառատյան Հ.): Գիրք 1: Երևան, 2001:
25. Պատմություններ աղքատության մասին (խմբ. Խառատյան Հ., Մարության Հ.): Գիրք 2: Երևան, 2007:
26. ***Պետրոսյան Հ.,*** Աղքատության ընկալում և վերաբերմունք, Պատմություններ աղքատության մասին: Գիրք 1: Երևան, 2001, էջ 370-383:
27. ***Պիկիչյան Հ.*** Երերուն սահման ոչ աղքատից աղքատ. Հայացք ներսից և դրսից, Պատմություններ աղքատության մասին: Գիրք 1: Երևան, 2001, էջ 383-392**:**
28. ***Օրդյան Մ., Մանուկյան Հ.,*** Աղքատության հաղթահարումը և տեղական ինքնակառավարումը Հայաստանում: Երևան, 2001:

29. Սահմանվեցին 2018-ի ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության չափերը: Հասանելի է. https://armenpress.am/arm/news/920261/sahmanvecin%C2%A02018-i-yntanekan-npasti-socialakan-npasti-ev.html.
30. Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում: Զ Եվրոպական Հանձնաժողովի Զբաղվածության, սոցիալական ոլորտի և ներառվածության գլխավոր տնօրինության զեկույց (***խմբ. Կարապետյան Ս.***): Երևան, 2011: Հասանելի է. http://www.crrc.am/hosting/file/_static_content/projects/social_protection_inclusion/Armenia_SP_SI_ExSum_Final_Armenian.pdf .
31. ***Alkire S.*** 2007. Choosing dimensions: The capability approach and multidimensional poverty. *CPRC Working Paper, 88*, 1-25.
32. Alkire S. and Foster J. 2011. Counting and Multidimensional Poverty Measurement, In Journal of Public Economics 95(7-8): 476-87.
33. ***Bonnell V.*** 1996. Identities in Transition: Eastern Europe and Russia After the Collapse of Communism. Berkeley: University California at Berkeley.
34. Bourdieu P. 1984. Didtinction: A Social Critique of the Jadjment of Teste. Cambridge, Massachisetts: Harvard University press.
35. ***Bourdieu P.*** 1986. The Forms of Capital. In Richardson J. (ed.) Handbook of Theory and Research for the Sociology of Education. New York: Greenwood Press, pp. 241-258.
36. ***Bessis S.*** 1995. From social exclusion to social cohesion: Towards a policy agenda. joint: (MOST) UNESCO, ILO, WHO, Commission of the European Communities (DG XII), ORSTOM, University of Roskilde, Roskilde.
37. ***Burawoy M., and K. Verdery*** (eds.) 1999. Uncertain Transition: Ethnographies of Change in the Postsocialist World. Lanham, MD: Rowman & Littlefield.
38. ***Darling R.*** 2002. Partnership models in human services: Sociological foundations and practices. New York, NY: Kluwer Academic/ Plenum Publisher.
39. ***Dudwick N.*** 2002. *When the Lights Went Out: Poverty in Armenia*. In. When Things Fall Apart: Qualitative Studies of Poverty in the Former Soviet Union. Dudwick N., Gomart E., and Marc A., with Kuehnast K. (eds.). The World Bank. Washington. pp. 117-155.
40. ***Falkingham J.*** 2005. End of the Rollercoaster? Growth, Inequality and Poverty in Central Asia and the Caucasus. In: Social Policy and Administration, Vol 39., No. 4, August 2005, pp 340-360.
41. ***Gans J.*** 1971. The uses of poverty: The poor pay all. In: Social Policy July/August: pp. 20-24.
42. ***Harvey D., and Reed M.*** 1996. Sociological Perspectives Vol. 39, No. 4, pp. 465-495
43. ***Chase E. and Bantebya-Kyomuhendo G.*** (eds.) . 2015. Poverty and Shame: Global experiences, Oxford: Oxford University Press.
44. ***Gomart E.*** 2002. *No Way Back: Social Exclusion among the Poorest in Armenia*. In. When Things Fall Apart: Qualitative Studies of Poverty in the Former Soviet Union. (eds. Dudwick N., Gomart E., and Marc A., with Kuehnast K.). The World Bank. Washington. pp.155-213.
45. ***Hann C.*** 2002. Postsocialism: Ideals, Ideologies, and Practicies in Eurasia. London: Routladge.
46. ***Human Development Report.*** 2010. The Real Wealth of Nations: Pathways to Human Development. UNDP. New York: Palgrave Macmillan.
47. ***Human Development Report.*** 2016. Human Development for Everyone. UNDP. New York: Palgrave Macmillan.
48. ***Humphrey C.*** 2002. The Unmaking of Soviet Life: Everyday Economies After Socialism (Culture and Society After Socialism). Cornell University Press.
49. ***Rank M***. 2004. *One nation underprivileged: Why American poverty affects us all*. New York, NY: Oxford Press.
50. ***Khan A. R.*** 2007. Growth, Employment and Poverty: An Analysis of The Vital Nexus Based On Some Recent UNDP And ILO/SIDA Studies. New York.
51. ***Kuzio T.*** 2001. Transition in Post Communist States: Triple or Quadruple, in: Politics, 21 (3), pp. 168-177.

52. ***Laderchi C., Saith R. and F. Stewart*** 2003. Does it matter that we do not agree on the definition of poverty: A comparison of four approaches. *Oxford Development Studies, 31* (3), 233-274.
53. ***Lewis O.*** 1966. The culture of poverty. American. October 1966, Vol. 215: 4, pp. 19-25.
54. ***Merton R. K.*** 1957. *Social theory and social structure.* New York, NY: Free Press.
55. ***Mckinley T*** . 2002. Growth Impact on Employment and Poverty Reduction. In: Economic Growth, Inequality and Poverty in Armenia. Yerevan. UNDP
56. ***Mukherjee A.*** 2007. Voices of the Poor: For PRSP Review of Armenia, Yerevan. UNDP.
57. ***Offe C.*** 1991. Capitalism by Democratic Design? Democratic Theory Facing the Triple Transition in East Central Europe, in: Social Research, 58 (4): 865-892
58. ***Picles J and Smith A***. (eds.) 1998. Theorizing Transition: The Political Economy of Post-Communist Transformations. London: Routledge.
59. ***Saith R.*** 2001. Capabilities: The concept and its operation. Retrieved from https://www.qeh.ox.ac.uk/sites/www.odid.ox.ac.uk/files/www3_docs/qehwps66.pdf.
60. *Sen A.* 1999. Development as Freedom. Oxford: Oxford University Press
61. Sen A. 1985. Commodity capabilities. New Delhi, India: Oxford University Press.
62. *Silver H. and S.M. Miller.* 2002. Social Exclusion: The European Approach to Social Disadvantage. Poverty & Race, Volume 11: Number 5 (September/October), pp. 2-23.
63. ***Walker R. and E. Chase.*** 2014. Adding to the shame of poverty: the public, politicians and the media. In *Poverty: Journal of the Child Poverty Action Group* :148, pp. 9-13.
64. ***Walker R. and E. Chase.*** 2015. Shame, stigma and policy effectiveness. Retrieved from http://www.rdw2015.org/uploads/submission/full_paper/84/ShameWalkerChase.pdf
65. ***Wolfe T.*** 2000. Cultures and Communities in the Anthropology of Eastern Europe and the Former Soviet Union, in: Annual Review of Anthropology, vol 29, pp. 195-216.
66. ***Valentine A.Ch.*** 1969. Culture and Poverty: Critique and counter proposals. Current Anthropology, Vol. 10, No. 2/3 (Apr. - Jun.), pp. 188.